№ 283 ՈՒՐԲԱԹ, 23 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1911 ՈՒՐԲԱԹ, 23 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ № 283

ԵՐԵՍՈՒՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Сергіевская ул., № 5.
Tiflis, Rédaction „Mschak"

Խմբագրատան տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.

Տպարանի տէլէֆոն № 67.

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ԱՌԱՋԻԿԱՅ 1912 ԹՈՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

ՔԱՌԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, 11 ամսվանը նոյնպէս 10 ր., 10 ամսվանը՝ 9 ր., 9 ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., 7 և 6 ամսվանը՝ 6 ր., 5 ամսվանը՝ 5 ր., 4 ամսվանը՝ 4 ր., 3 ամսվանը՝ 3 ր., 2 ամսվանը՝ 2 ր., 1 ամսվանը՝ 85 կ. և 15 կ. պօստի ծախք:

Ամերիկայի բաժանորդները պիտի վճարեն տարեկան 6 դօլլար. Եւրօպայի բաժանորդները՝ 32 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի. Թիւրքիայի բաժանորդները՝ 120 ղրուշ:

Հասցէները փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն, և միևնոյն ժամանակ 40 կ. նամականիշ:

Հին բաժանորդներից խնդրվում է կպցնել փոխադրական բլանկի վրա նախկին տպագրված հասցէն իր վրա ունեցած համարով:

Մեր հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ". Արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal „MSHAK".

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

„ՄՇԱԿԻ" ԳՐԱՍԵՆԵԱԿԻՑ

Ի նկատի ունենալով, որ ուշ բաժանորդագրվելու պատճառով ստեղծվում են մի շարք տեխնիքական անյարմարութիւններ, որոնք զրկում են խմբագրութեան գրասենեակին հնարաւորութիւնից յունվարի 1-ից կանոնաւորապէս թերթն ուղարկել բաժանորդներին, ուստի խնդրվում է բաժանորդ գրվել ցանկացողներին վաղօրօք դիմել՝ գրելով հասցէները պարզ և ճշգրիտ:

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ԱՐՕՐ"

Գրական-գիտական-գեղարուեստական-հասարակական և խաղաղասիրական

ԱՄՍԱԳԻՐ

ԱՌԱՋԻԿԱՅ 1912 Թ. ՀԱՄԱՐ

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

Ամսագիրը հրատարակվելու է ամեն ամսվայ վերջին և բաղկացած է լինելու առնուազն 8 տպագրական թերթից (նաբօր) և աւելի՝ եթէ միջոցները ներեն:

Ռուսաստանի համար	Տարեկան բաժանորդագինն	— 6 րուբլի:	
	«Մշակի» տարեկան բաժանորդների համար	4 րուբլի:	
Արտասահմանի համար	Եւրօպա	— 20 ֆրանկ.	«Մշակի» բաժ. համար 16 ֆր.
	Ամերիկա	— 4 դօլլար.	» » » 3 դօլ.
	Թիւրքիա	— 6 րուբլի	» » » 4 ր.
	Պարսկ.	— 6 րուբլի	» » » 4 ր.

Ամեն մի համարը առանձին արժէ 50 կոպ.:

Հասցէն. Тифлисъ, Сергіевская №5. Редакція журнала „Аропъ".
Tiflis, Rédaction de la Revue „Aror".

Խմբագիր-հրատարակիչ՝ Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

◆ ◆ ◆

„ԱՐՕՐ"

1910 և 1911 Թ. Թ.

Ցանկացողները կարող են ստանալ «Արօրի» նախորդ, այն է 1910 և 1911 թ. թ. բոլոր համարները, վճարելով իւրաքանչիւր տարվան 4 րուբլի. իսկ «Մշակի» կամ «Արօրի» 1911թ. բաժանորդները՝ 3 րուբլի:

ԹԻՖԼԻՍԻ ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

Այսօր, դեկտեմբերի 23-ին

ՕՊԵՐԱՅԻՆ ԽՈՒՄԲԸ ՊԱԼԻԵՎԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹԵԱՄԲ

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐ. ԸՆԿ. ՕԳՏԻՆ

Փոխանակ «Մարգարիտ Որոնողները» օպերայի՝ ներկայացնելու է

I

ԼԱԿՄԷ

օպերա երեք գործ., մասնակցութեամբ՝ Դօբրժանսկայայի, Կարանօվիչի, Կօմիսարժեվսկիի, Լօսևայի, Լիւբչենկօյի, Սանդուցցիի, Սերգեևի, Շմիդտի և Իւչենկօյի:

II

ՀԱՄԵՐԳԱՅԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

Մասնակցութեամբ Կարանօվիչի, Կարատովի, Մօզժուխինի, Զալեևայի և Կնեազինինի: Տոմսակները վաճառվում են թատրոնի կասսայում.

Սկիզբն է ժամը 8-ին երեկոյեան:

առ. 1181. 1—1

ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՍԱԼՕՆԻ

այսօրվայ հերթական jour fixe-ը, նուիրված՝ Կ. Հ. Բ. Ը. հիմնադրին, յետաձգվում է հետևեալ ուրբաթ, դեկտեմբերի 30-ին: Որովհետև «ՏԱՐԱԶԻ» ՄՆԱՑՈՒՆ ՑՈՒՇԱՐՁԱՆ Կ. Հ. Բ. Ը. XXX-ամեակին դեկտեմբերի 25-ից առաջ լոյս չէ տեսնելու:

առ. 30. 1—1

Բեռլինի համալսարանի

ԲԺՇԿԱՊԵՏ

Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ

Ներքին հիւանդութիւններ՝
առանձնապէս կրծքի, ԹՈՔԱՑՔԻ և սրտի:
Սրսկումներ նաև տուբերկուլեններով:
Ընդունելութիւնը ամեն օր՝
առաւօտեան ժամը 9—11-ը և երեկոյեան ժամը 5—7-ը:
Католическая ул. д. № 10. Տէլէֆոն № 792.
(ա.օ.) առ. 989. 100—60

ՄԵՂՐ

ՓՈՒՆՏԸ 20 ԿՈՊ.

ՍԵՓԱԿԱՆ ՄԵՂՈՒԱՆՈՑԻՑ

Վաճառվում է բարօն ֆօն-ԿՈՒՋԵՆԲԱԽԻ խանութում:

Գօլօվինսկի պր., № 6, տուն Մանթաշեանի:
(Կ.) առ. 1188. 2—1

ԱՆՆՊԱՍՏ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Ինչու նախորդ ընտրութիւնների ժամանակ այնքան աչքի չէին ընկնում ընտրական կանոնների պակասութիւնները, որքան այժմ, ներկայ կաթողիկոսական ընտրութեան ժամանակ:

Երկու պատճառներով: Մէկն այն էր, որ տեղի չէին ունեցել այնպիսի գեղծումներ, որպիսիները տեսանք այժմ: Երկրորդը այն, որ հակառակ կողմերը աշխատում էին որոշ համաձայնութեան գալ և քառանուն ցանկը կազմել այնպէս, որ գոհացած լինեն պայքարող կողմերը:

Երբ համաձայնութիւն կայ մարդկանց մէջ, այն ժամանակ օրէնքի թերութիւնները աննկատելի են անցնում, որովհետև անհրաժեշտութիւն չէ զգացվում ուրոյն դիրքերի պաշտպանութեան հոգս ունենալ:

Եթէ ազգային ժողովը իր սահմանափակող բանաձևով կաշկանդած չը լինէր Թիւրքահայ պատգամաւորներին, այլ ընդհակառակը յանձնարարած լինէր նրանց գնալ Կովկաս և այնտեղ հանգամանօրէն քննելով ընտրութեան վերաբերեալ խնդիրները՝ կարգադրել լաւագոյնը և խելացին, այն ժամանակ մենք բոլորովին ուրիշ արդիւնք պէտք է տեսնէինք հրապարակի վրա:

Թիւրքահայ պատգամաւորները, դժբաղդաբար, ուրիշ կերպ վարվեցին:

Նրանք նոյն իսկ չուզեցին կանգ առնել Թիֆլիսում և նախնական խորհրդակցութիւններ ունենալ: Մի փոքր մասը միայն փորձեր արեց մտքերի փոխանակութիւն անելու Թիֆլիսում:

Թիւրքահայերի մեծագոյն մասը խուսափում էր որևէ նախնական խորհրդակցութիւնից: Կծկված իր պատեանի մէջ, զմռսած իրան չինական անձեռնմխելիութեամբ՝ նա սահեց դէպի Էջմիածին և այնտեղ շարունակելով ղեկավարվել իր ստացած նեղ պոլսական հրահանգներով՝ դէն շպրտեց ռուսահայ մեծամասնութեան առաջարկները, չը ճանաչելով ոչ մի իրաւունք, բացի իր սեփական իրաւունքից:

Փորձեր եղան համաձայնութիւն կայացնելու: Բայց Թիւրքահայ մեծամասնութիւնն ըմբռնում էր «համաձայնութիւն» խօսքը այնպէս, որ նա ոչ մի զիջում չանի, որ նա չը յարգի դիմացինի ցանկութիւնը:

Համաձայնութիւն կայացնելու գործողութիւնը դարձաւ մի կատակերգութիւն: Թիւրքահայ մեծամասնութիւնը ոչ մի ձևով չէր ուզում յարգել ռուսահայ թեմերի մեծագոյն մասի կարծիքը:

Եւ ահա այդտեղ պարզվեց, թէ որքան անկատար և պակասաւոր են գոյութիւն ունեցող ընտրական կանոնները: Նրանք կարծես ստեղծված էին միայն նրա համար, որ ոչ մի հնարաւորութիւն չը տան պատգամաւորին իր իրաւունքները պաշտպանելու և ժողովրդի տրամադրութիւնը հարազատօրէն արտայայտելու:

Հնացել են կանոնները և այլևս չեն համապատասխանում ժամանակակից պահանջներին:

Պէտք է վերացվի բաց քուէարկութիւնը և միայն մի սկզբունք ընդունվի՝ գաղտնի քուէարկութիւն:

Իսկ եթէ թողնվում է բաց քուէարկութիւնը ընտրելիների ցուցակ կազմելու համար, այն ժամանակ պէտք է այդ ցուցակը լինի ոչ թէ քառանուն, այլ անորոշ, որքան որ կը լինեն քուէարկել ցանկացողներ:

Էջմիածնական ընտրութիւնների ժամանակ օտարոտի է և այն, որ թեկնածուները չեն քուէարկվում մի անգամից, այլ մէկը միւսի ետևից: Փոխանակ չորս քուէտուփ դնելու և մի անգամից քուէարկելու նրանց, քուէարկվում է նախ մէկը, ապա միւսը, երրորդը, չորրորդը:

Անշուշտ՝ ընտրութիւնը այդպիսով սխալ գաղափար է տալիս ընտրողների տրամադրութեան մասին, որովհետև առաջին քուէտուփի արդիւնքը փոխում է ընտրողների հաշիւները, և նրանք ծրագրում են թեկնածուների նոր դասաւորութիւններ:

Այդ բոլորը կատարվում է հապճեպով, խառնվում են պայմանադրութիւնները, հանդէս են գալիս իրարանցումներ և վերջ ի վերջոյ առաջանում են յուզմունքներ այնտեղ, ուր պէտք է միայն լուռ հանդիսատես լինել եղած վէճերի և պայքարների շփման վերջնական արդիւնքին:

Եթէ ընտրական կանոնները աւելի կատարեալ լինէին, եթէ նրանք արտօնեալ վիճակ ստեղծած չը լինէին ընտրողների մի մասի համար և միջոց տուած լինէին բոլորին միահաւասար պաշտպանելու իրանց պատգամաւորական իրաւունքները, անշուշտ, մեղմացած կը լինէին մի որոշ չափով այն կնճիռները, որոնք հանդէս եկան Էջմիածնական վերջին ընտրութեան ժամանակ:

Ընտրական կանոնների նշանաւոր բարեփոխութիւններից մէկը պէտք է լինի ռուսահայ և թիւրքահայ ընտրական շրջանների աւելի նպատակայարմար դասաւորումը:

Անարդար մի դրութիւն է, որ կէս միլիօն հայ ազգաբնակութիւնը տայ այնքան ներկայացուցիչ, որքան և մի տասնեակ հազար հայ բնակչութիւն ունեցող վիճակը:

Այդ մասին մենք արդէն խօսել ենք և դարձեալ առիթ կունենանք մեր կարծիքը յայտնելու:

Ա. Քալանթար

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

—o—

ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Կաթողիկոսական ընտրութեան իսկական պատկերը

V

Մենք ասացինք, որ Թիւրքիայից եկած եկեղեցական և աշխարհական պատգամաւորների մեծ մասը—բացառութեամբ մի քանի ինքնուրոյն, անկախ և համոզված մտաւորականների—ներկայացնում էր կատարեալ բարոյական ոչնչութիւն և կոյր գործիք էր խմբապետների ձեռքում: Առաջ բերելով բացառութիւն կազմող սակաւաթիւ անձանց անունները, մենք մոռացել էինք յիշել նրանց մէջ նաև Մատթէոս վարդապետ Ինճէեանին և բժշ. Փափազեանին ու Թորգոմ եպիսկոպոսին, որոնք դէմ էին Օրմանեանի ընտրելիութեանը ոչ թէ այն նկատումներով, ինչ որ խմբապետները կամ նեղ կուսակցականները, այլ բոլորովին այլ նկատումներով: Այսպէս օրինակ՝ Զմիւռնիայի առաջնորդ Մատթէոս վ. Ինճէեանը քանիցս ասաց մեր շրջանում և կրկնեց.

«Ես ամենամեծ յարգանք ունիմ դէպի Օրմանեան սրբազանը և կը գնահատեմ խորապէս անոր արժանիքը. բայց անոր դատը նման է Դրէյֆուսի դատին: Գիտէք, որ եղաւ ատեն մը, երբ գրեթէ համակ Ֆրանսան կը նկատէր զնա իբրև դաւաճան, մատնիչ մը. շատ սակաւ անձինք համոզուած էին անոր անմեղութեան: Այդ ժամանակ ոչ ոքի խօսք հասկցնել կարելի չէր. փողոցն էր որ կը գործէր, խուժանն էր որ ազդած էր ընդհանուր հասարակական կարծիքի վրայ: Նոյն իսկ Զօլա, որ ընդգրկեց անոր դատը, հանդէս եկաւ անոր պաշտպանութեան համար, ենթակայ եղաւ ծաղրի, անարգանքի, նախատինքի: Բայց Զօլա չվհատեցաւ. սպասեց, մինչև որ մտքերը շինուին, հանդարտուին և, եկաւ վերջապէս օր մը, երբ նոյն Ֆրանսան գրեթէ միաբերան անմեղ և անպարտ հռչակեց Դրէյֆուսը: Այդպէս է և սրբազան Օրմանեանի դատը. մտքերը դեռ գայթակղած են մեր Թիւրքիոյ մէջ անոր նկատմամբ, բայց շինուելու, պարզուելու ճամբուն վրայ են. տարակոյս չունիմ, որ հեռու չէ այն օրը, երբ Թիւրքիոյ գրեթէ ամբողջ հայութիւնը բոլորովին կը փոխէ կարծիքը Օրմանեանի մասին: Այժմ զայն հանգիստ ձգելու ենք, զբաղելու համար իր գրական երկերով. այդ ասպարէզին մէջ նա մեծ ծառայութիւններ կրնայ մատուցանել ազգին, մինչ կաթողիկոսական գահին վրայ, շրջապատուած՝ զինքը ատողներէ, դժուար թէ կարենայ գործ կատարել»:

Կրկնում եմ՝ համոզված, անկախ անձանց թիւը շատ քիչ էր: Մնացածները՝ ոչխարամիտ ուղղութեամբ հետևում էին Եր. Տէր-Անդրէասեանի, Միհրդատ Հայկազնի, Վ. Փափազեանի պէս անձանց, որոնց մասին նոյնիսկ իրանք Թիւրքահայերը ամենամեծ արհամարհանքով էին խօսում: Մեր ամբողջ խումբը չը լսեց գէթ մի Թիւրքահայ պատգամաւորի բերանից որևէ մի ամենափոքր լաւ ակնարկ Եր. Տէր-Անդրէասեանի մասին. «Ջանըմ, անոր խօսքը ընելու չէ. անիկայ պարզապէս փողոցային սրիկայ մըն է, եկած՝ Տէրունեանի դրամներով, յատկապէս Օրմանեանը նախատելու պաշտօնով, որովհետև Օրմանեան զրկեր է Տէրունեանը մի մեծ ժառանգութենէ՝ յօգուտ ազգի»: Այն հանգամանքը, որ նոյն Տէր-Անդրէասեանը դիմած է եղել սկիզբներում Օրմանեան սրբազանին, առաջարկելով ստանձնել իր թերթի մէջ նրա պաշտպանութիւնը, դրամական որոշ վարձատրութեամբ, և մերժումն է ստացել, նոյնպէս պատմել են մեզ Թիւրքահայ պատգամաւորները:

Թէ Թիւրքահայ պատգամաւորների մեծ մասը՝ անգիտակից և աննկարագիր մարդիկ էին, զուրկ սեփական համոզմունքից, զուրկ ինքնազարգումից, դրա ամենալաւ ապացոյցը և հետևեալ փաստն է:

Յայտնի է, որ Կ. Պոլսի հայոց ազգային երեսփոխանական ժողովը նկատված է իբրև Թիւրքիայի ամբողջ հայութեան ներկայացուցիչը ազգային գործերի մէջ: Նոյն իսկ մենք ռուսաստանցի հայերս աշխատել ենք միշտ այդ տեսակէտով բարձր պահել ազգ. ժողովի նշանակութիւնը: Եւ այդ պատճառով է, որ Խրիմեանի, Իզմիրլեանի ընտրութիւնների ժամանակ՝ Էջմիածին գումարված համազգային ընտրողական ժողովի (ոչ-պաշտօնականի) ատենապետ կամ նախագահ էինք ընտրում ազգային ժողովի ներկայացուցիչներին: Այս անգամ, ղեկավարվելով միևնոյն սկզբունքով, մենք առաջարկեցինք ատենապետ ընտրել ազգային ժողովի ներկայացուցիչ Օննիկ Չիֆթէ-Սարաֆին, թէև սա հակաօրմանեանական էր: Եւ մենք միանգամայն համոզված էինք, որ Թիւրքիայի հայ թեմերի իրանց ներկայացուցիչ համարողները—որոնք Օրմանեանին ձայն չի տալու գլխաւոր պատճառներից մէկն և այն ներկայացնում էին այն հանգամանքը, թէ «ազգային ժողովը բարոյական պարտականութիւն է դրեր մեր վրան՝ քուէ չը տալ անոր, և մենք պարտաւոր ենք բարձր պահել ազգային ժողովի հեղինակութիւնն ու որոշումը, նոյն իսկ եթէ այդ որոշումը հակառակ ըլլայ մեր սեփական համոզման»—իրանց սեպուհ պարտականութիւն կը համարէին, իրանց ազգային ժողովի հեղինակութիւնը բարձր պահելու համար, ատենապետ ընտրել այդ ժողովի իսկական ներկայացուցչին: Բայց չարաչար սխալվեցինք: Չիֆթէ-Սարաֆ ստացաւ 19 ձայն, այն և մեր ձայները, իսկ մեծամասնութիւնը, իբրև հօրդա, գնաց Եր. Տէր-Անդրէասեանի և Միհրդատ Հայկազնի ետևից և ձայն տուեց Սամսոն Յարութիւնեանին... Ինչու: Որովհետև «Թայֆան» այդպէս էր որոշել, որովհետև Չիֆթէ-Սարաֆ թէև հակաօրմանեանական, բայց Թայֆայական չէր, հակումն չէր ցոյց տալիս ոչխարի նման գնալ 4 խմբապետների ետևից:

Թէ Թիւրքահայ պատգամաւորների ոչխարային մեծամասնութիւնը, որոնք միւս կողմից աշխատում էին մեզ համոզել, թէ իրանք դէմ են և կուսակցականներին, խելք և ոյժ չունեցաւ պաշտպանել ազգային ժողովի պատիւը, դրա մի երկրորդ փաստն էլ այն է, որ ընտրութեան թղթերը Կովկասի Փոխարքային ներկայացնելու համար կազմված պատգամաւորութեան մէջ չը մտցրին ազգային ժողովի ներկայացուցչին, Չիֆթէ-Սարաֆին, որովհետև այդ ներկայացուցիչը անդամ էր ազգային ժողովի այն հատուածի, որին չէր պատկանում Միհրդատ Հայկազնը:

Եւ այդպիսի մարդիկ յանդգնում էին, չէին ամաչում ասել մեզ, թէ «մենք պարտաւոր ենք մեր ազգային ժողովի անունը բարձր պահել»: Կաշառված Եր. Տէր-Անդրէասեանը ազգային ժողովի հեղինակութեան անունով էր արդարացնում իր վարմունքը, բայց չէր ամաչում թելադրել իր ոչխարամիտ հետևողներին, թէ ձայն մի տուէք այդ ժողովի ներկայացուցիչ Չիֆթէ-Սարաֆին, որովհետև իրանց կեղտոտ նպատակները իրագործելու համար բարի և ամաչկոտ Չիֆթէ-Սարաֆը անյարմար էր. յարմար էր մի անձն, որ դուրս գար միշտ կոռէկտութեան, անաչառութեան սահմաններից և վարէր ժողովներն այնպէս, ինչպէս ձեռնտու էր Թայֆայականներին, իսկ այդպիսի անձն միայն Ս. Յարութիւնեանն էր, որ գիտէ гдѣ раки зимуютъ.

Ոչխարամտութեան, Թայֆայականութեան մի այլ խայտառակ ապացոյցը տուին Թիւրքահայ պատգամաւորները, ղեկավարված նոյն խմբապետներից: Ինչպէս յայտնի է, Ամերիկայից եկել էին երկու պատգամաւոր՝ Մ. Պէրպէրեան և Հ. Ամբրուկեան: Բոլոր փաստերը, գրաւոր դօկումենտները յօգուտ Մ. Պէրպէրեանի էին. նա էր ընտրված ամերիկահայոց ազգային երեսփոխանական ժողովի կողմից, հետևաբար՝ օրինաւոր պատգամաւորը նա էր, բայց ժողովը, նախագահութեամբ Ս. Յարութիւնեանի, մերժեց նրա պատգամաւորութիւնը, ենթադրելով որ Մ. Պէրպէրեանը օրմանեանական է, մինչ նա հակաօրմանեանական էր. այդ հանգամանքը մենք, օրմանեանականներս, գիտէինք, բայց այնուամենայնիւ մենք ձայն տուինք յօգուտ Մ. Պէրպէրեանի, որովհետև արդարութիւնը, իրաւունքը նրա կողմն էր: Երբ ժողովը վերջացաւ և յայտնի եղաւ, որ Մ. Պէրպէրեանը հակաօրմանեանական է, Թիւրքահայ պատգամաւորներից մի քանիսը դիմում են նրան՝ Պէրպէրեանին և ասում. «Ո՞հ, ինչ մեծ սխալ գործեցինք, էֆէնդիմ. ինչու կանխօրէն չըսիք և չյայտարարեցիք ժողովին, թէ դուք հակառակ էք Օրմանեանին. ապահովաբար, մենք ձեզ կը ճանչնայինք պատգամաւոր»։

Ահա ինչ տեսակ մարդիկ էին ուղարկել մեզ Թիւրքահայերը իբրև իրանց ներկայացուցիչներ։ Եւ բնական է, որ այդպիսի ոչխարամիտ ներկայացուցիչները, որոնց համար մի Եր. Տէր-Անդրէասեան, մի Միհրդատ Հայկազն, մի Վ. Փափազեան մի-մի պարագլուխներ էին, չունենալով քաղաքական գիտակցութեան, հոտառութեան նուրբ զգացումները, խաղալիք դարձան խուժանապետների ձեռքին և առանց երկար մըտածելու՝ մի խոր վէրք փորեցին մեր՝ ռուսահայերիս և իրանց միջև։ Հ. Ա.

ԳԱՒԱՌՆ ԱՐՁԱԳԱՆՔՈՒՄ Է

Ձայն Արմաւիրից

Արմաւիր, 17 դեկտեմբերի

Մենք, ճանաչելով Սուքէնեան արքեպիսկոպոսին, մինչև այժմ կարծում էինք, որ նրա տեղապահութեանը մարդիկ հանդուրժում են իբրև աւագագոյնը ըստ աստիճանի և հասակի։

Բայց այսօր հեռագրական տեղեկութիւններից իմանում ենք, որ պատգամաւորական ժողովը գտել է, որ Սուքէնեան սրբազանը ոչ միայն հասակով, այլև մտաւոր և ուրիշ դրական յատկութիւններով առաջինն է ամբողջ հայ հոգևորականութեան մէջ, որովհետև հասարակութեան և հոգևորականութեան շահերն ու տարրական բարեխղճութիւնն ու ազնւութիւնը պահանջում են ընտրել եղածներից ամենաարժանաւորագոյնը։

Մենք առ այժմ մանրամասնութիւնները չը գիտենք, որովհետև մեզ հասած լրագիրները հաղորդում են միայն հեռագրական տեղեկութիւններ, որից իմանում ենք, որ պատգամաւորների մի մասը հեռացել է ժողովից և մնացել են ժողովում 90 հոգի, որից 50-ը հոգևորական են։ Ուրիշ խօսքով ասած՝ մնացածների մէջ դարձեալ հոգևորականութիւնը մեծամասնութիւն է կազմում և այդ մեծամասնութիւնը ընտրում է կաթողիկոս սրբազան Սուքէնեանին՝ իբրև իր ամենաարժանաւոր անդամին։

Ի՞նչ գրենք սրանից յետոյ, քանի որ հայ հոգևորականութիւնը դրանով ինքն իրան տուեց իր ատեստատը։

Վարդան Սարգսեան

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

21 դեկտեմբերի

Պարիզ.—Հավասի գործակալութեանը հաղորդում են Կ. Պօլսից. «Նոր մինիստրութիւնը կազմվեց այսպէս. մեծ վէզիր՝ Սայիդ-փաշա, շէյխ-իւլ-իսլամ՝ Նէսսիբ-էֆէնդի, ներքին գործերի մինիստր՝ Թալէաթ-բէյ, երկրագործութեան՝ սենատոր Արիստիդի, լուսաւորութեան՝ Էմրուլլահ, աշխատանքի՝ Սինապեան. պօստ-հեռագրական մինիստրի պաշտօնը առ այժմ թափուր է. մնացած մինիստրները մնում են իրանց պաշտօններում։ Կաբինէտը կազմված է բացառապէս առաջադիմական դաշնակցութեան անդամներից»։

Հէլսինգֆորս.—Սենատը պատուիրագրեց գլխաւոր գրասենեակին վճարել պետական գանձարանին 6 միլիօն մարկ, որ զինուորական կարիքների համար յատկացված գումարի մնացորդն էր։

Աթէնք.—Առաւօտեան ժամը 10-ին, գիշերային չափազանց երկար նիստից յետոյ, պալատը շտապով աւարտեց իր պարապմունքները, որպէսզի կրէտական պատգամաւորները հնարաւորութիւն ստանան ազատվել շոգենաւերում բանտարկված դրութիւնից։

Պալատը ընդունեց բիւջէն և զօրքի վերակազմութեան նախագիծը համաձայն ֆրանսիական զինուորական միսսիայի ցուցումների, որոնցով գործող զօրքի կազմը 150,000 մարդ է։ Յատկացվեց նաև 46 միլիօն նաւատորմի ուժեղացման համար։

Վերջում կարդացվեց պալատը արձակելու հրովարտակը, որ ընդունվեց ծափահարութեամբ։

Հռոմ.—Զինուորական «Պրէպարացիոնէ» օրգանը հաղորդում է, որ ծովային և զինուորական մինիստրութիւնները համաձայնել են լայն չափով զարգացնել զինուորական օդագնացութիւնը։ Մտադրութիւն կայ աւելացնել դիրիժաբլների թիւը և ստեղծել զօրքում և նաւատորմում 2 միլիօն արժեցող օդային նաւատորմ։

Վաշինգտոն.—«Եօրկտուն» յածանաւին հրամանագրվեց Պանամայից գնալ Էկուադօր՝ օտարազգի շահերը անկարգութիւնների ժամանակ պաշտպանելու համար։

Նախագահ Տաֆտը յայտնեց այցելուներին, թէ միմիայն մահը կարող է խանգարել իրան կուիւ մղելու Նախագահութեան համար ընդդէմ Բուզվէլտի։

Վիէննա.—Մամուլը քննում է ֆրանսիական, անգլիական և ռուս լրագիրների այն արշաւանքը, որ սկսվել է Աւստրօ-Ունգարիայի դէմ՝ եռապետեան համաձայնութեան երկիրներում փոխառութիւններ կնքելու առիթով։ «Նէյէ-Ֆրէյէ-Պրէսսէն» այդ արշաւանքը անուանում է անհիմն, որովհետև Աւստրիան կարիք ունի սոսկ 150 միլիօն կրօնի։ «Ցէյտը» գտնում է, որ միաժամանակ Պարիզում, Լօնդօնում և Պետերբուրգում արշաւանք սկսելը չափազանց խրատական է և բնորոշ միջազգային դրութեան համար. արդէն սկզբում մերժում եղաւ Թիւրքիային և Ունգարիային. նոր երևոյթ է, որ աւստրիական փոխառութիւնը ուզում են խեղդել դեռ չը ծնված. ֆրանսիացիք պատասխանում են գըրգռված «ոչ»-ով, լսել անգամ չուզելով աւստրիական ցանկութիւնները։ Վերջում «Ցէյտը» մատնանշում է միջազգային ներհակութեան սուր կերպարանքի վրա։

«Նոր. Բիւրօյին» տեղեկացնում են Բէլգրադից. «Աւստրօ-ունգարական դեսպանը պաշտօնապէս կառավարութեան անունով յայտնեց, թէ իշխան Ալէքսանդր Կարագէօրգէվիչի գահը գտնըված է աներկբայօրէն։ Աւստրօ-ունգարական կառավարութիւնը այդ առիթով արտայայտում է իր գոհունակութիւնը։ Դեսպանը խնդրեց պաշտօնապէս հաղորդել այդ մասին սերբիական թագաւորին»։

«Նէյէ-Ֆրէյէ-Պրէսսէն» յայտնում է, որ կայսրը և դուքսը զինուորական մինիստրին գոհունակութիւն յայտնեցին պատգամաւորութիւններում արտասանած ճառի առիթով։

Իշխան Ալէքսանդրի և իշխանուհի Պէրսիդա Կարագէօրգէվիչների աճիւնը գերեզմանատան դամբարանից փոխադրվեց կայարան՝ Սերբիա ուղարկելու համար։

Գալիցիայում ընտրութիւնների բարենորոգումների մասնաժողովը շարունակում է իր զբաղմունքները՝ չը նայած ուկրայնցիների հեռանալուն։ «Նէյէ-Ֆրէյէ-Պրէսսէի» տեղեկութիւնների համաձայն՝ լեհերը պատրաստ են ընդառաջ գնալ ռուսներին տնտեսական ու դպրոցական հարցերում։ Հաւանօրէն զիջումն կը լինի պատգամաւորական տեղերի խնդրում ևս, սակայն ռուսների $1/3$ տեղի պահանջը բաւարարութիւն չի ստանայ։ Գալիցիայում սէյմը բացվելու է դեկտ. 29-ին։

Բուդապեշտ.—Աջողութեամբ հեռացվեց կոմս Կուէն-Խէդէրվարիի աչքի բիւրեղային ոսպի վէրքը։

Ազատ մտածողների «Վիլլագ» օրգանը տպել է խորվատական սէյմի պատգամաւոր Բարիչի յայտարարութիւնը խորվատական ճգնաժամի մասին։ Մանջար-խորվատական ունիայի միտքը սէյմի մեծամասնութիւնը չէ պաշտպանելու, մինչև որ մաջար-խորվատական համաձայնութիւնը վերաքննութեան չենթարկվի։ Խորվատական օպպօզիցիան պահանջում է ճանաչել խորվատ լեզուի իրաւունքները, դադարեցնել ունգարական դպրոցների աւելացնելը, վերացնել երկաթուղային կանոնադրութիւնը։

Ինսբրուկ.—Տեղի ունեցան բուռն հակաաւստրիական ցոյցեր։ Եղան արիւնահեղ ընդհարումներ իտալացիների և գերմանացիների միջև։ Ոստիկանութիւնը և ժանդարմերիան ցրեցին իտալացիներին, վիրաւորելով մի քանիսին։

Բուդապեշտ. — Զափառօ-անկուսակցական աչքի ընկնող «Բուդապեշտի-Հիրլապը» խօսում է յօգուտ Ռուսաստանի հետ մերձեցում կապելուն։

Պորտսմուտ. — Նոր-Տարվայ նախօրեակին Լօնգմօսս բանակում, Սոուտհեմպտօն կոմսութեան մէջ, շոտլանդացի զինւորները, դժգոհ որ Նոր-Տարվայ օրը զինւորներին հատ-հատ են ազատում պարապմունքներից, ապստամբվեցին երեկոյեան. ապստամբները քանդեցին մի քանի զինւորական շէնքեր և քարեր նետեցին օֆիցերների բնակարանները։ Ապստամբները իրանց ցրել փորձողներին վիրաւորեցին սուիններով և սպանեցին մէկին։ Մի հմուտ բոկսէր օֆիցեր կուի հրաւիրեց ապստամբների լաւագոյն բոկսէրին։ Օֆիցերի յաղթութիւնից յետոյ զինւորներն աստիճանաբար ցրվեցին իրանց տեղերը։

Բրէսլաւ.—Վախճանվեց գրող Ֆէլիքս Դանը։

ՀԵՌԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ

(Պետերբուրգի Հեռ. գործ.)

21 դեկտեմբերի

Խարբին.—Ուրգից հաղորդում են, որ Խուտուխտան 300,000 լան յանձնեց բանկի տեղիս բաժանմունքին գործածութեան համար, մինչև որ չինական բանկը կը վերածվի մօնղօլականի։

Սիլիանը 100,000 լան ստացաւ կայսերական գերդաստանի համար բնակարաններ պատրաստելու և մօնղօլներից զօրախմբեր կազմակերպելու համար։

Քսաներորդ զօրաբանակի ապստամբված զօրախմբերը գրաւեցին Շանխայգուան կայարանը, խզելով յարաբերութիւնը Մանջուրիայի և Չինաստանի միջև։ Ուղարկվեց մի եապօնական զօրամաս յարաբերութիւնը վերականգնելու համար։

Պէկին.—Մայրաքաղաքի ինքնավարութեան բաժանմունքների ներկայացուցիչների խորհրդակցութեան մէջ վճռվեց իշխան Ցինի մօտ մի պատգամաւորութիւն ուղարկել, պահանջելով առատ նուիրաբերութիւն անել պատերազմական ծախքերի համար և համոզել մնացած իշխաններին անել միևնոյնը։ Վճռական մերժման դէպքում, լուրերի համաձայն, կը սկսվեն բռնի միջոցներ։

Իւանշիկայը նորից միջնորդեց ազատ կացուցանել իրան իր պաշտօնից։

Ցաւիչ լուրերի ազդեցութեան տակ մայրաքաղաքի բնակիչները սկսում են խմբերով մեկնել։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

21 դեկտեմբերի

Լօնդօն.—Րէյտէրի տեղեկութիւնների համաձայն Պարիզում տեղի է ունենալու անգլիացի, ֆրանսիացի և ռուս դրամատէրերի ներկայացուցիչների ժողով՝ 100,000 ֆունտ դրամագլուխ կազմելու մասին պայմանագիր կապելու՝ յատուկ ընկերութեան միջոցով անդրպարսկական երկաթուղագծի կառուցման նախնական հետազօտական աշխատանքների համար։ Գիծը լինելու է Թէհրանից Գվադար։ Հնդկական կառավարութիւնը Լօնդօնից ուղղված հարցին պատասխանեց, թէ ցանկալի է, որ Հնդկաստանի հետ երկաթուղին միանայ Կարաչիում՝ փոխանակ Կուչկայում։ Ռուսաց կօմիտէն դէմ է գիծը Բէնդէր-Աբասով տանելուն և առաջարկում է Կարաչի-Գվադար գիծը, յետոյ դէպի հիւսիս Քիրմանի վրայով։ Ապա պայման է դրվում, որպէսզի Ռուսաստանը առանց Անգլիայի չը պաշտպանէ պարսկական-աֆղանական սահմանագլխի վրա երկաթուղիներ կառուցանելու նախագիծը։ Նախագծվում է կառուցանել երկաթուղու ճիւղեր, որոնցից երեքը վերածվելու են միջազգայինի, մի գիծը անցնելու է Բէնդէր-Աբասից կամ Չախբարից դէպի Քիրման և լինելու է անգլիական։ Ռուս կօմիտէտը կարծում է, որ դրամագլուխը ստանալը և Պարսկաստանից համաձայնութիւն առնելը դժուարութիւնների չի հանդիպի։

Ջուլֆա.—Երկու թնդանօթաձիգ վաշտ մտան Թաւրիզ։

(Լրագիրներից)

Պետերբուրգ.— Այսօր մեր ընդհանուր հիւպատոսը Թաւրիզում՝ պ. Միլլէր տեղեկագրեց արտաքին գործերի մինիստրութեանը մեր զօրքերի գալու և կենտրոնանալու մասին Թաւրիզում։ Ոչինչ նոր յարձակումներ ռուս զինուորների դէմ Թաւրիզում չեն եղել։ Դրութիւնը 24 ժամվայ ընթացքում չէ փոխված։ Ռուս զինուորների վրա յարձակման գլխաւոր ղեկավարը, ինչպէս երևաց, տեղական պրինց-նահանգապետ Միրզան էր, որը, հէնց որ դէպքերը փոխվեցին, շտապեց բաստ մտնել։

Այսօր ոչինչ հեռագիրներ չեն ստացված Թէհրանի մեր դեսպանից։

Թաւրիզում կենտրոնացած է մօտ 5,000 մարդ մեր զինուորներից, մնացած զօրամասերը բանակած են Ռաշտում և Էնզելիում։ Կասպից ծովի ափին Էնզելիում կարգը պաշտպանում են մեր երեք զինուորական նաւերը։ Ինչ վերաբերում է Թէհրանին, ռուս դիւանագիտական շրջաններում հերքում են այնտեղ ռուս զօրքեր մտցնելու մասին լուրերը։

Որպէս հաղորդում են տեղեակ շրջաններից, բոլոր ռուս զօրքերի հրամանատարն է գեն.-մայօր Ն. Ի. Վօրօպանօվ, իսկ նրա օգնական գնդապետ Զայլին։ Գեներալ Վօրօպանօվ մասնակցել է թիւրքական և Խիվայի պատերազմներին։ Թեթև վիրաւորված է եղել, և Խիվայի արշաւանքի համար պարգևատրված է ս. Գէօրգի 4-րդ աստիճանի շքանշանով։ («Р. С.»)

Պարիզ.—«Matin» լրագրին Պետերբուրգից հաղորդում են, որ Ռուսաստանը ամենևին դիտաւորութիւն չունի միացնել իր երկրին Պարսկաստանի մի որևէ մասը կամ գահ բարձրացնել նախկին շահին։

Բեռլին.—Շիրազում վիրաւորված անգլիական հիւպատոսը աջողութեամբ ժամանեց Կազրան։ Վէրքը շատ թեթև է։

Մոսկվայում ստացված են հետևեալ տեղեկութիւնները Թաւրիզից.

«Թէպէտ մեռած ռուսների թիւը ճիշդ յայտնի չէ, սակայն կարծում են, որ սպանված և վիրաւոր զինուորների թիւը հասնում է մինչև 200-ի։ Ֆէդայիների կորուստները անհշան են, որովհետև նրանք գործում էին 10-ական մարդուց բաղկացած առանձին խմբերով։ Քաղաքը մնաց առանց պարսկական ադմինիստրացիայի ներկայացուցիչների։ Նահանգապետ պրինց Միրզան երկիւղ կրելով ազգաբնակութեան յարձակումից, ազատեց իր գլուխը փախուստ տալով անգլիական հիւպատոսարան։ Իսկ նշանակված նահանգապետ Ֆէրման-Ֆէրմանը հրաժարվում է Թաւրիզ գընալուց, մինչև որ այնտեղ հանգստութիւն կը տիրէ»։ («Р. В.»)

Վերջերս ստացված արտասահմանեան լրագիրների Թէհրանի հեռագիրները կապում են վերջին խոշոր դէպքերը՝ Պարսկաստանի մայրաքաղաքում՝ արիւնահեղ անցքերի հետ Թաւրիզում և մեր զօրքերի յարձակման հետ։ «Berliner Lokal Anzeiger» լրագրի թղթակիցը հաղորդում է, որ երեք օր առաջ պատերազմը Թաւրիզում և նրա գրաւումը ռուս զօրքերով Թէհրանում առաջ բերին ճգնաժամ, որ խիստ կերպով որոշված էր դեռ անցեալ շաբաթ։ Քաղաքում լուրեր էին պտտում, որ կառավարութիւնը կատարելապէս գլուխը կորցրել է, որովհետև Ռուսաստանը իբր թէ գոհ չը մնաց ուլտիմատումի ընդունելութեամբ և պատերազմ յայտարարեց Պարսկաստանին։ Իսկութիւնը այն է, որ կառավարութիւնը, այսինքն խնամակալը և կաբինէտի կազմի մէջ մըտնող բախտիարները անյապաղ մի շարք շատ լուրջ միջոցներ գործադրեցին։ Վաղ առաւօտեան կիրակի խնամակալը հրաւիրեց իր մօտ մէջլիսի անդամներին և յայտնեց նրանց, որ, կառավարութեան համաձայնութեամբ, նա պարլամենտը լուծված է յայտարարում։ Պատգամաւորները մեծ զայրոյթով ընդունեցին այդ հաղորդութիւնը և անյապաղ մէջլիս գնացին բողոքը կազմակերպելու համար։ Սակայն այդ նրանց չաջողվեց, որովհետև մէջլիսի շինութիւնը փակված էր և շրջապատված էր զօրքերով, որոնք չէին թողնում ոչ ոքի մտնել այնտեղ։ Պատգամաւորները ցրվեցին քաղաքում։ Նրանցից շատերը, գլխաւորապէս ռամկավարականների դեմոկրական կուսակցութեան պատկանողները աշխատում էին փողոցային միտինգներ սարքել, սակայն զօրքերը և ոստիկանութիւնը ցրվում էին ամբոխի որևէ համախմբումն։ Թէպէտ և խնամակալը յայտնեց, որ նոր ընտրութիւնները կը նշանակվեն ըստ կարելւոյն շուտով, սակայն քիչ են հաւատում այդ բանին. ընդհանուր տարածված համոզմունք է, որ մէջլիսը այլևս չի ընտրվի։ Քաղաքը համեմատաբար խաղաղ է։ Կարգը պահպանում են 2000 բախտիարներ, ոստիկանութիւնը, ժանդարմները և զօրքերը, ընդամենը մօտ 10,000 մարդ։ Կառավարութիւնը դադարած յայտարարեց ռուսական ապրանքների բոյկօտը։ Կառավարութիւնը զինուորական դատարանով է սպառնում խանութները և շուկաները փակել դրդողներին, նոյնպէս և տրամվայները կանգնեցնողներին։ Այդ բոլոր միջոցները, որոնք ապահովում են կարգը Թէհրանում, միևնոյն ժամանակ ապացոյց պէտք է ծառայեն այն բանի, որ կառավարութիւնը ձգտում է ի կատար ածել Ռուսաստանի բոլոր պահանջները և որ նա ամենևին մասն չունի Թաւրիզի դէպքերում։ Դրութիւնը սակայն կրիտիքական է մնում, որովհետև գաւառներում կառավարութիւնը անզօր է։ Այն ինչ շատ տեղերում ռուսական ուլտիմատումի ընդունելը և մէջլիսի արձակումը չափազանց յուզմունք առաջացրին. կառավարութիւնը ամեն կողմից բողոքներ է ստանում։ Ռուս զօրքերի յարձակումը աւելի ևս խճճեց կառավարութեան դրութիւնը, որը կորցնում է ազդեցութեան վերջին մնացորդները մայրաքաղաքի սահմաններից դուրս։ («Р. В.»)

Հեռագիրները հաղորդեցին, որ անգլիացիները շարունակում են ուժեղացնել իրանց զօրքերը Պարսկաստանի հարաւում պարսիկների յանդուգն ընթացքը տեսնելով։ Անմիջական առիթ ծառայեց անգլիական հիւպատոս Սմարտի վրա յարձակումը, որը անգլօ-հնդկական զօրքերի պահակախմբով Բուշիրից գնում էր Շիրազ։ «Vos. Zeit.» լրագրի ստացած տեղեկութիւնները այդ դէպքին հետևեալ լուսաբանութիւնն են տալիս։ Անգլօ-հնդկական զօրքերի շարժումը դէպի Շիրազ, որը համեմատում և կապում էին ռուսական զօրաբաժնի մտնելու հետ Կազվին, մեծ զայրոյթ և կատաղութիւն առաջացրեց անգլիացիների դէմ։ Հէնց այդ հողի վրա էլ տեղի ունեցաւ հիւպատոս Սմարտի ինցիդէնտը, որը այդ պատճառով աւելի լուրջ բնաւորութիւն է կրում, քան դրա նման այլ դէպքերը, որ յաճախակի տեղի են ունեցել հարաւ-պարսկական ճանապարհների վրա։ Հէնց յարձակման մանրամասնութիւնները յայտնի են հեռագիրներից։ Պէտք է միայն աւելացնել, որ պահակախումբը սովորականից աւելի բազմամարդ էր։ Կռիւը շարունակվում էր բաւական երկար և սաստիկ կատաղի բնաւորութիւն ունէր։ («Р. В.»)

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԵԱՆ ԴԱՍԱԽԱՆԴՈՒՄԸ ՄԵՐ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

Վերջին տարիներս մեր դպրոցներում մտցված է առողջապահութեան դասախօսութիւնների աւանդումը, որի անհրաժեշտութիւնը շատ վաղուց նկատելի է միջնակարգ դպրոցներում ընդհանրապէս, իսկ մեր դպրոցներում մասնաւորապէս։ Շեշտելով մեր դպրոցները, մենք ի նկատի ունենք այն, որ մեր դպրոցներում սովորելով մեծ մասամբ չքաւոր դասակարգի զաւակներ՝ աւելի մեծ կարիք ունին առողջապահական պահանջներին ծանօթանալու։

Սխալ է այն կարծիքը աղքատ դասակարգի կողմից, որ չքաւորը բոլորովին չէ կարող ստեղծել առողջապահական պայմաններ. անշուշտ չքաւորի նիւթական պայմանները, տնտեսական վիճակը թոյլ չեն տալիս ամբողջովին բաւականութիւն տալ առողջապահական պահանջներին, բայց կան այնպիսի առողջապահական նշանակալից հասկացողութիւններ, որոնց համար անհրաժեշտ չէ նիւթականապէս օժտված լինել. բաւական է մեր մտաւոր կենտրոնների (թերթերը առողջապահական յօդուածների, դպրոցներն առողջապահական դասախօսութիւնների միջոցով) ուշադրութիւնը, որով կարելի կը լինի ամբոխին հասկանալի դարձնել, տարրական և հեշտութեամբ իրագործելի, անհրաժեշտ առողջապահութեան օրէնքները, որով անշուշտ մեծ գործ կատարված կը լինի։

Անցնելով մեր դպրոցներից առայժմ Մարիամեան-Յովնանեան օրիորդաց դպրոցին, որը իր պատմական անցեալով միշտ մեծ դեր է խաղացել մեր մէջ, տալով արժանաւոր գործիչներ, առանձնապէս ուսուցչական ասպարէզում, վերջին ժամանակներս մտցված է առողջապահական դասաւանդումը։

Ներկայ լինելով այդ դասախօսութիւններին՝ պէտք է խոստովանել, որ աշակերտուհիները բաւական առաջադէմ են առողջապահութեան դասերից, որը աւանդում է բժիշկ Բ. Աղասարեանը, առանձնապէս ուշ դարձնելով իր առարկային, աշխատելով ամենայն կերպ դիւրըմբռնելի դարձնել իր դասերը։

Դպրոցը ունի դեղատուն, որտեղից հիւանդ աշակերտուհիներին դեղեր է տրվում բժշկի քննութեամբ։

Դպրոցների ստատիստիկան ցոյց է տալիս, որ աշակերտութեան մեծամասնութիւնը գանգատվում է վնասված ատամներից. այդ բանը առանձնապէս նկատելի պէտք է լինի այն դպրոցների սաների վերաբերմամբ, որտեղ չքաւոր դասակարգն է աշակերտութեան մեծամասնութիւնը կազմում։

Ատամները քիչ վնասվելուց՝ աղքատ աշակերտը, չը կարողանալով դիմել ատամնաբոյժի օգնութեան, բարձի-թողի են անում, իսկ վնասված ատամը շարունակում է ի հարկէ փչանալ, առաջ բերելով անտանելի ատամնացաւ իր դժուար հետևանքներով։

Կեանքում մենք շատ անգամ ենք պատահում հիւանդների, որոնց հիւանդութեան պատճառը ատամներն են եղած։ Վերջիններս փչանալով անհնարին է դառնում կերակուրը լաւ ծամել և ստամոքսի գործը հեշտացնել, որով և դժուարանում է ստամոքսի աշխատանքը, իսկ վերջ ի վերջոյ ստամոքսը հիւանդանում է իր ծանր հետևանքներով։ Այս ի նկատի առնելով՝ ցանկալի կը լինէր, որ մեր դպրոցները, նմանապէս Յովնան.-Մարիամեան դպրոցը իր դեղատան կից ունենար և ատամնաբուժարան, որտեղ աշակերտուհիները կարողանային բժշկել տալ իրանց հիւանդ ատամները, որով բարւոքված կը լինէր առողջապահական պայմաններից մի խոշորը, որ այնքան մեծ նշանակութիւն ունի օրգանիզմի ընդհանուր առողջութեան գործում։ Եթէ դպրոցի վարչութիւնը չէ կարողանում լրացնել այդ պակասը, դա կարող են անել մեր հարուստներից մէկն ու մէկը, մանաւանդ որ այդ բանի համար մեծ գումար չէ պահանջվում։ Դոկտ. Վ. Ա. Խաչ.

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ 30-ԱՄԵԱՅ ՅՈԲԵԼԵԱՆԻ ԱՌԻԹՈՎ

Յովհաննէս Յովհաննիսեան։ Ո՞վ չէ լսել այդ անունը, ո՞վ երկիւղածութեամբ չէ արտասանել այդ անունը և ո՞վ վեհութեան, հզօրութեան իդէալական ույժ չէ ըմբռնել այդ երկու գողտրիկ բառերը արտասանելիս։

Եւ այդ վեհ ու հզօր ույժը 30 տարի շարունակ հնչեցրել է իր քաղցրալուր վինը, իր բազմալար տաւիղը, յուզվել ու յուզել է մեզ և աներևոյթ, անտեսանելի քնքոյշ կապերով կապել է մեզ իր հետ։

Ո՞վ դեռ մանկութիւնից, դեռ աշակերտական չոր, բայց դիւրալի նստարանի վրա՝ չէ ճաշակել նրա սահուն, գողտրիկ ոտանաւորների քաղցրութիւնը։

Բաց արէք լեզուի որ դասագիրքը կուզէք, անպայման կայ Յ. Յովհաննիսեանի կտորներից. և այդ պատահականութիւն չէ, այլ անհրաժեշտօրէն պիտի լինի։

Եւ իսկապէս ինչ բան կարող էր փոխարինել հէնց, օրինակ, «Գիւղի ժամը» բանաստեղծութեանը, որ մանուկ հոգին յուզում, անգամ լացացնում է և բարութեան սերմերն է գցում նրա մէջ։

Բայց մենակ այդ... ապա «Ախ, աշուղ, առ չօնգուրդ, մեզ բան ասա սրտալի» ու շատ այդպիսիները...

Եւ այսօր հրապարակ է դրված տօնելու մեր ամենից սիրելի բանաստեղծի 30-ամեայ յօբելեանը։

Յօբելեան... ուրիշ խօսքով՝ բարոյական վարձատրութիւն է այդ, որին իսկապէս արժանի է նա։

Երեսուն տարի տանջվել է նրա հոգին, երեսուն տարի իր աղի արցունքներով օծել է մեր խղճուկ կեանքը, ոգևորել, դաստիարակել է սերունդներ և վերջապէս այժմ գոնէ պիտի մխիթարել, սրբել նրա արցունքները և եթէ ոչ նիւթապէս, գոնէ բարոյապէս վարձատրել։

Մենք, մենք ենք պարտաւոր նրա մեզ 30 տարի շարունակ տուած հոգեկան սնունդի փոխարէն գոնէ շնորհակալութիւն յայտնել, և այն ժամանակ նա կը մխիթարվի։

Մենք պարտաւոր ենք այդ մխիթարանքը տալ մեր ամենասիրելի սգաւոր երգչին։

Ծունկի եկած՝ խոնարհվում ենք տաղանդի առաջ, ույժ ու կորով բարեմաղթելով նրան սգազգայուն, որ էլ աւելի թափով յուզէ, ոգևորէ նա մեզ։

Չը պէտք է մոռանալ նաև, որ նա միաժամանակ և ուսուցիչ է, ցաւատանջ, տառապած խեղճ հայ ուսուցիչ։

Ուրեմն կեցցէ Յովհաննիսեանը, և պատրաստվենք հոգեպէս մխիթարելու մեր ժամանակակից երգիչների ռահվիրային։

Արշալոյս Տէր-Յովհաննեան

ԸՆԹԵՐՑՈՂԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ

VIII

Երեք ամսվայ ակամայ լռութիւնից յետոյ վերսկսելով իմ յիշատակարանը՝ ես ցաւ ի սիրտ ստիպված եմ նրան դարձեալ նուիրելու մի հայ տաղանդի ցաւալի վիճակին։

Ինչպէս յիշում է ընթերցողը, իմ յիշատակարանի առաջին, անդրանիկ գլուխը նուիրված էր դերասան Յովհաննիսեանին, որը հոգեկան հիւանդութիւն էր ստացել և անօգնական վիճակի մէջ էր գտնվում։

Գտնվեցին արդեօք մարդիկ կամ հիմնարկութիւններ, որոնք որևէ կերպով օգնութիւն հասցրած լինէին մեռնող, ոչնչացող հայ տաղանդին՝ ես այդ չը գիտեմ և ինձ հետ էլ շատ-շատերը։ Բայց կասկածում եմ։ Եւ կասկածում եմ, որովհետև հայը սովոր չէ իր պարտքը կատարելու, սովոր չէ իր գործիչներին գնահատելու ու օգնելու նրանց կենդանի ու առողջ դրութեան ժամանակ։ Հայ հասարակութեան գնահատութեանը արժանանալու համար պէտք է մեռնել միայն։

Այսպէս է եղել միշտ և դժբաղդաբար այսպէս էլ կը մնայ։

Հայը իր գործիչներին դագաղի մէջ պառկած ժամանակն է միայն ճանաչում ու գնահատում. այս մի ակսիոմա է, որից հայը երբէք չէ շեղվել։

Ինչքան ուզում էք գրեցէք, բղաւեցէք որ այս-ինչ կամ այն-ինչ գործիչը հիւանդ է, հիւծված, քաղցած ու օգնութեան կարօտ, այդ բոլորին հայը զերօյի նշանակութիւն չի տալ, մինչև որ ձեր այդ գործիչը մեռնէ։

Եւ այդ բոլորը ես մի անգամ էլ յիշեցի, երբ կարդացի «Մշակում» (№ 264) Եա..-ի յօդուածը («Օգնեցէք»)դերասան Գալֆայեանի դրութեան մասին։

Ես ճանաչում էի Նրան։

Մի եռանդոտ, կենսուրախ, բեմի վրա սիրահարված երիտասարդ, որը ուխտել էր հայ բեմին նուիրելու իր ույժերը։

Վառ հաւատով նա նետվեց իր սիրած փշոտ ասպարէզը, շատ կարճ ժամանակով ոգևորեց մեր հասարակութեանը իր տաղանդի ույժով և ասուպի պէս չքացաւ հորիզոնից։

Ու հայը մոռացաւ նրան։

Մոռացաւ այն անձնաւորութեանը, որի «Համլէտով» ու «Օտէլլօյով» դեռ երէկ ոգևորվել էր, որին իր խանդավառ ցոյցերի առարկայ էր շինել։

Եւ այժմ քաղցած ու տնանկ նա օրվայ հացի է կարօտ և սրա ու նրա դռներն է բաղխում իր քաղցը յագեցնելու համար։

Ուրիշ հասարակութեան մէջ նա այժմ միանգամայն ապահովված մի մարդ կը լինէր, իսկ մեզ մօտ նա մի մուրացկան է, հաց մուրացող մի մուրացկան։

Ահա հայ գործչի սովորական ճակատագիրը։

Եւ «Մշակի» աշխատակիցը կոչ է անում կ. Հ. Բարեգ. Ընկերութեանը օգնութեան ձեռք կարկառելու սովամահ եղող հայ գործչին, բայց մի բան է մոռանում, որ այդպիսի կոչեր շատ են եղել։

Գիտակից հասարակութիւնը առանց այդ կոչերի էլ օգնութեան կը հասնէ իր գործչին։

Բայց մենք ունենք արդեօք գիտակից հասարակութիւն։

Այդ դեռ հարց է։

Կ. Հ. Բարեգործ. Ընկերութիւնը պորտաբոյծներին օգնութեան կը հասնէ, Դրամատիկական Ընկերութիւնը իր ֆաւօրիտներին միայն միջոց և հնարաւորութիւն կը տայ ապրելու և այն էլ՝ փառաւոր ապրելու, իսկ հայ տաղանդը, որ դրանցից և ոչ մէկի ֆաւօրիտը չէ, հայ տաղանդը, որը միայն իր ույժերի վրա վստահացած նրա պնակալեզը չէ դարձել, միայն կենդանի դիակ կարող է դառնալ և ուրիշ ոչինչ։ Իսկ կենդանի դիակներին մենք չենք սիրում, մենք ուզում ենք, որ դիակը իսկական դիակ էլ լինի։

Եւ այն ժամանակ ահա միայն հայը ասպարէզ կը գայ, այն ժամանակ միայն նա ցոյց կը տայ, որ գիտէ յարգել իր գործիչներին։ Վ. Թումանեան

ՏԱՐԵՎԵՐՋԻ ԽՈՀԵՐ

II

Մաղրասա գ., (Շամախ. գաւ.), 19 դեկտ.

Ամսիս 3-ին մեր գիւղական ժողովը երկու խիստ օգտակար վճիռ կայացրեց. մէկը՝ եկեղեցու բակի ընդարձակումը, իսկ միւսը՝ հիւանդանոցի հիմնումն ու բժշկի հրաւիրելը։

Մեր եկեղեցու բակը չափից դուրս փոքր է։ Մեր գիւղի բոլոր աչքի ընկնող մարդիկ տարիներից ի վեր համամիտ են եղել նրա ընդարձակմանը։ Շատ արգելառիթ հանգամանքներ թոյլ չեն տուել, որ մեր գիւղացիք եկեղեցու բակը ընդլայնեն ժամանակին։ Բարեպատեհ առիթը նոր է միայն ներկայանում, և մեր գիւղացիք սիրով ընդառաջ գնալով կարիքին՝ իրագործում են իրանց վաղուցվայ նպատակը։ Բայց այդ միայն մասամբ։ Ցանկալի կը լինէր, որ նրանք մի քայլ ևս առաջ գնային և իրանց սկսած գեղեցիկ գործը կիսատ չը թողնէին։ Քանի որ նպաստաւոր տրամադրութիւնը դեռ վառ է իրանց մէջ և քանի որ խօսակցութիւնը այդ մասին դեռ վերջնականապէս դադար չէ առել, ուրախալի կը լինի, եթէ պարտքի դիմաց վերցված հողաբաժնի ուղղութեամբ մի ուրիշ հողաբաժին ևս գնվի ու կցվի եկեղեցու բակին։ Մեզանից ով զգացել և կամ զգում է եկեղեցու բակի փոքր լինելու մի քանի անյարմարութիւնները, նա պէտք է համակրութեամբ վերաբերվի նրա ընդարձակման մտքին և ինքն էլ իր կողմից որոշ քայլեր անի ի նպաստ ըսկսված գործի։

Ժողովը, որ զբաղվեց մեր գիւղում հիւանդանոց հիմնելու և բժիշկ հրաւիրելու խնդրով, ունէր իր ձեռքում Մաղրասայի Գիւղատնտեսական Փոխադարձ Օգնութեան Ընկերութեան առաջարկը։ Համաձայն Ընկերութեան այդ առաջարկի, ժողովը վճռեց հայթայթել նրան՝ Ընկերութեանը՝ 1-ական րուբլի իւրաքանչիւր ծխից (տարեկան) և վարձատրել բժշկի իւրաքանչիւր այցը (վիզիտ) 20-ական կոպէկով։ Այսպիսով՝ մեր գիւղացիներից նրանք, որոնք այս կամ այն կերպով կապված են հողի հետ, սիրով ցանկանում են կատարել իրանցից պահանջվելիք բարոյական և նիւթական պարտաւորութիւնները։ Մնում է, որ յիշեալ Ընկերութեան ղեկավարներն ևս ի նկատի առնեն մեր գիւղական ժողովի այդ յոյժ ուրախալի վճիռը և շտապեն ու շտապեցնեն։

Բայց մինչև այսօր Ընկերութեան ղեկավար մարմինը գոնէ մեզ այն կարծիքի է պահել իր վերաբերմամբ, որ նա ձեռնհասութեան ոչ մի երաշխաւորութիւն չէ տուել ու չէ կարող էլ տալ հանրօգուտ որևէ գործ իրականացնելու և այդ գործը առաջ տանելու ստրիճանական առաջադիմութեան ուղիով։

Մեզ հաւատացնում են, 1) որ Ընկերութիւնը իր գոյութեան առաջին շրջանում դեռ որոշ և կանոնաւոր գործ չը ձեռնարկած՝ պառակտվել է, 2) որ նա իր սկզբնական քայլերը սխալ ուղղութեամբ է վերցրել, որի համար և տուժել է, ապացոյց՝ պլիւրից մնացած ապառիկները, 3) որ նա իր տրամադրութեան տակ գտնված մօտ 4000 րուբլին անխոհեմ և իր ծրագրի թելադրութիւններին անհամապատասխան եղանակով է շահեցրել և 4) որ այդ երեք պատճառներից գրգռված՝ նրա մօտ 120 անդամները դադարեցրել են իրանց անդամավճարների կանոնաւոր վճարումը։

Բացի այս չորս պատճառներից՝ կայ նաև մի ուրիշ պատճառ։ Այդ այն է, որ Ընկերութեան մուտքի մէջ սպրդել են աչք ծակող սխալներ, վերաբերեալ այն անդամավճարների, որոնց գանձումը վստահացված է եղել Ընկերութեան ներկայացուցչին՝ գիւղում։ Եթէ այդ մտքով խօսեցնելու լինենք Ընկերութեան՝ գիւղից դուրս չեկած անդամներին, կը տեսնենք, որ նրանք բաւականաչափ առիթներ ունեն դժգոհելու նրա... հաշւապահութիւնից։ Այս. այս բոլորի մասին մեզ հաւատացնում են։

Բայց... ինչ որ է։ Սկսվում է մի գեղեցիկ և օգտակար գործ։

Մեր երազած հիւանդանոցը մօտ է, որ հիմնվի և սկսի իր փրկարար գործունէութիւնը մեր յետամնաց միջավայրում։ Հարկաւոր է, որ գործի ղեկավարութիւնը ամփոփվի այնպիսի ձեռքերում, որոնք լինեն ըստ ամենայնի մաքուր և յարգեն մեզ ու փոխադարձաբար յարգվեն մեզանից։

Այս իսկ պատճառով մենք մեր կողմից անպայման ցանկալի ենք համարում, որ Մաղրասայի Գիւղատն. Փոխադարձ Օգնութեան Ընկերութեան ներկայ ղեկավար մարմինը, որ տեղի կամ անտեղի կերպով կորցրել է ժողովրդի աչքում իր վստահութիւնը, տեղի տայ, յետ քաշվի ասպարէզից և սկսվող կուլտուրական քայլի ղեկը յանձնի իրանից առաւել ձեռնհաս և ժողովրդի համակրանքն ու վստահութիւնը վայելող մի մարմնի։ Մօտիկ ապագան ցոյց պէտք է տայ, թէ մեր ժողովրդի սրտացաւ բարեկամները մինչև որ աստիճան ընդունակ են օգտվելու բարի խորհուրդներից։

Այստեղ, որ, ըստ մեզ, շատ տեղին է, չենք կարող ուրախութեամբ չարձանագրել, որ առհասարակ մեր գիւղական կեանքի իւրաքանչիւր կուլտուրական երևոյթին համակրութեամբ է վերաբերվում մեր գիւղական տանուտէրը։ Ոչ միայն այդչափ, այլ և աշխատում է ըստ իր կարողութեան նպաստաւոր դերք բռնել այդ երևոյթների իւրաքանչիւրի վերաբերմամբ։

Հայրենակից

Յ.Գ.—Մաղրասայի Գիւղատն. Փոխադարձ Օգնութեան Ընկերութեան մասին մեր հաղորդածները լսվի են։ Ընկերութեան տպագրված հաշւեցուցակը, որին մենք սպասում ենք համաձայն նրա վերջին շրջաբերականի դեռ չենք ստացել։ Ուրախ կը լինենք, եթէ այդ հաշւեցուցակը հիմնովին յեղաշրջել կարողանայ մեր կարծիքը նրա, այսինքն՝ Ընկերութեան մասին։

Նոյն

ԲՆԱԿԱՆ ԹԷ՞ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ

Կենսական մթերքների սաստիկ թանգութիւն է տիրում։ Ոչ միայն թանգ են իւղը, պանիրը, ձուն, ձուկը, կաղամբը, կարտօֆիլը և այլ նպարեղէնները, այլ և հացահատիկները, որ կազմում են ազգաբնակութեան ամենագլխաւոր սնունդը։ Աւելորդ է ասել, որ մեր գիւղացին առանց վերը յիշված մթերքներից մէկն ու մէկի կարող է մասամբ եօլա գնալ, այն ինչ առանց հացահատիկների նա կորած է, մանաւանդ երբ նա վերին աստիճանի թանգ գին ունի և անմատչելի գնողին։ Աւելի տարօրինակ պայմանների մէջ է նկատվում հացահատիկների թանգութիւնը։ Երբ դեռ հունձի միջոցին թանգ էին ցորենի և ալիւրի գները, դա դեռ հասկանալի էր, քանի որ բոլորի ուռեսուր պաշարները սպառվելով՝ սպասում էին հունձի արդիւնքին, հետևապէս հացի գները պէտք է թանգ լինէին բնականաբար։ Բայց ինչ կասէք, երբ կալսելուց անմիջապէս յետոյ հացի գները էլ աւելի բարձրացան, չը նայած, որ հասարակութեան մեծամասնութիւնը իր սեփական հացի պաշարը ձեռք բերեց։ Եւ փոխանակ գները իջնելու, գնալով էլ աւելի բարձրացան թէ ցորենի, թէ գարիի և թէ ալիւրի։

Եւ այդպէս հացահատիկների գները բերքի հաւաքման միջոցին փոխանակ էժանանալու, ինչպէս լինում է սովորաբար, էլ աւելի թանգացան և ժողովրդին մեծ մտատանջութեան մէջ գցեցին։ Մարդիկ անհամբեր սպասում էին (մանաւանդ գնողները), որ բնականաբար միշտ աշնան բերքի հաւաքման միջոցին հացի գները կընկնեն համեմատական չափով, նայած տարվայ առատութեան և բերքի քանակութեան, բայց ընդհակառակը դուրս եկաւ, չը նայելով, որ այս տարի մեր գաւառում այնքան էլ անառատ բերք չէ եղել հացահատիկների նկատմամբ։ Սակայն այդ տեսակէտից ժողովրդի մէջ կատարեալ հիասթափութիւն առաջ եկաւ, քանի որ էժանութեան փոխարէն թանգութիւն տեղի ունեցաւ և այդ պատճառով ժողովրդի տրամադրութիւնը զանազան կարծիքներ արտայայտեց՝ արհեստական թանգութեան վերաբերմամբ։ Բայց սակայն նայած ընդհանուր շուկաների գների համեմատական չափերին, դժուար թէ ներկայ թանգութիւնը արհեստական համարվի, քանի որ հացի գների թանգութիւնը մի տեղ չէ, երկու տեղ չէ, այլ նա տիրապետում է ընդարձակ շրջաններ, ուր մտնում են զանազան երկիրներ, ծայրագաւառներ և հեռաւոր նահանգներ։ Նոյնիսկ Ռուսաստանի մի քանի նահանգներում, ինչպէս ցոյց են տալիս լրագրական տեղեկութիւնները, սովի նշաններ են երևում։ Եւ ահա այդ գները գուցէ և ազդում են բնականաբար մեր երկրի գների վրա, որովհետև, նկատված է, երբ մի որևէ տեղից թանգութեան հոտ է բուրում, տեղական առատութիւն էլ իր գները գցում է էժանութեան առաջ և գների թելադրումներ անում համաչափ պայմաններով... Դա ինարկէ ցաւալի երևոյթ է։ Սակայն աւելի ցաւալին այն է, որ քանի թանգանում են կենսական մթերքների և ուտելեղէնների գները, նոյնքան և աւելի զգալի է դառնում փողի սղութիւնը և ժողովուրդը նեղվում է դրամական պակասութիւնից առհասարակ։ Երբ փող կայ և երբ աշխատանքը իր նորմալ դրութեան մէջ՝ վարձատրում է աշխատաւորին, այդ դէպքում հեշտ է թանգութեան դէմ կռուել։ Իսկ երբ ոչ փող կայ և ոչ աշխատանք և ժողովրդի ծայրահեղ նեղութեան մէջ է, այդ դէպքում նրա դրութիւնը կրիտիքական է և աղքատութիւնը անխուսափելի... Ահա այդ կրիտիքական դրութեան մէջ է գտնվում այժմ մեր ժողովրդի մի դրութիւն, որ ոչ մի կողմից նախանձելի չէ...

Այսպէս թէ այնպէս երբ տիրող թանգութիւնը մտքեր է զբաղեցնում, և ժողովրդի մեծ տագնապի մէջ գցում և երբ այդ թանգութեան պատճառները զանազան ձևերի և արտայայտութիւնների տակ են մեկնվում ժողովրդի այս և այն խաւերում, շատ բնական է, որ այդ թանգութիւնը մէկի մօտ արհեստական, իսկ միւսի մօտ բնական երևայ։ Եւ այդ պատճառով զանազան տարբեր կարծիքներ են տիրում մեր ժողովրդի մէջ այժմեան թանգութեան վերաբերմամբ, մանաւանդ որ հացի գները վերջերս սկսել են տատանվել, մի հանգամանք, որ կարծել է տալիս շատերին դէպի արհեստական թանգութեան հաւատարացումներ։

Եւ այդպէս տարբեր կարծիքների ու ձևերի արտայայտութիւնների տակ ոչ ոք մի որոշ եզրակացութեան և հետևանքի չէ կարողանում յանգել՝ թէ արդեօք այժմեան թանգութիւնը, որ տիրում է բոլոր շուկաներում և մթերանոցներում, բնակա՞ն է թէ արհեստական։ Սակայն շատ չի անցնի և այն ժամանակ մասամբ կը պարզվին այս տարվայ տիրող թանգութեան պատճառները։

Որսորդ

Նոր-Բայազէտ, 14 դեկտ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

✦ Այսօր տեղի կունենայ Փ. Բօղիչեվի երկրորդ և վերջին դասախօսութիւնը, որի նիւթն է՝ «Հերցէնը և նրա արտադրութիւնները»։

✦ Դեկտեմբերի 21-ին Պետերբուրգից Թիֆլիս ժամանեց Վրաստանի էկզարխ Իննօկէնտի արքեպիսկոպոսը, որին դիմաւորելու էին գնացել կայարան վրաց հոգևորականութեան ներկայացուցիչները։

✦ Կիրակի, դեկտ. 18-ին, Քութայիսում աւարտվեց Իմէրէթի հոգևորականութեան համագումարը։

✦ Կայսերական Կովկասեան Գիւղատնտեսական Ընկերութեան քարտուղար ընտրվեց Միքայէլ Վերմիշեանը։ Քուէարկվում էին Վերմիշեանը և Բելիկաձէն, սակայն ձայների մեծամասնութիւն ստացաւ Վերմիշեանը։

✦ Այսօր տեղի կունենայ նահանգական ատեանի նիստը, որը կը քննէ այն բոլոր բողոքները, որոնք տրված են այլ և այլ ընտրողների կողմից քաղաքային ընտրութիւնների ժամանակ օրինազանցութիւնների նկատմամբ։ Բողոքողների թւումն է նաև 5-րդ քաղաքամասի ընտրող Մ. Բէլեանով, որը վերջերս այդ առիթով բողոք է ներկայացրել նահանգական իշխանութեան։

✦ Դեկտ. 27-ին Թիֆլիսի կանանց բարձրագոյն դասընթացքների ուսանողուհիները կազմակերպում են երեկոյթ դասընթացքների շինութեան մէջ։

✦ Ձերբակալված է Պետական Դումայի նախկին անդամ Ս. Տէր-Աւետիքեան, որը մեղադրվում է «Դաշնակցութեանը» պատկանելու գործում։

✦ Նկարչութեան ուսուցիչ յայտնի նկարիչ Յ. Շամշինեանը, 3-րդ և 5-րդ գիմնազիաների յանձնարարութեամբ, դեկտեմբերի 21-ին Թիֆլիսից մեկնեց Պետերբուրգ, ուր կը մասնակցէ նկարիչների համառուսական համագումարի նիստերին։

✦ Վրացի նեղ ազգայնականների մի խմբի միջոցներով Թիֆլիսի քաղաքային ընտրութիւններից առաջ հրատարակվող «Կլդա» թերթը, իր միսիան աւարտելուց յետոյ, դադարեց առ միշտ։

✦ Թիֆլիսի քաղ. վարչութեան քարտուղար Իւ. Թամամշեանը թողեց իր պաշտօնը։ Նրա տեղ նշանակվում է նախկին գլխաւոր հաշւապահ Ս. Դանդուրեան։

✦ Զինուորական վարչութիւնը նախագծում է ծառայութեան կոչել պաշտօնաթող օֆիցէրներին՝ ըստ ցանկութեան զօրքերի մէջ կատարելու ոչ զուտ զինուորական պարտականութիւններ, որով պաշտօնի մէջ գտնվող օֆիցէրները ազատ կը լինեն երկրորդական գործեր (զինուորական մասերի գանձապահութիւն և այլն) կատարելուց։ Պաշտօնաթող զինուորականները պաշտօնի կոչվելով՝ կը ստանան իրանց կենսաթոշակները։ Այժմ, ինչպէս լսել է «Рѣчь» լրագիրը, զինուորական գնդերի գլխաւորները այդ նախագծի դէմ են։

✦ Վրաստանի էկզարխը թոյլատրել է Սօֆի Թեվզօրիձէին ուղղափառութիւնից անցնել լութերականութեան։

✦ Սղնախից մեզ հեռագրում են հետևեալը. «Դեկտեմբերի 22-ին, Մուկուզանիի դաստակերտում (Սղնախի գաւառ), որը պատկանում է Եփրեմ Իսահակեանին, ոստիկանութիւնը, գլխաւորութեամբ Թելաւի գաւառապետ Գամբերգի, յանկարծակի շրջապատեց մի աւազակախմբի, որի մէջն էր գտնվում յայտնի ահաբեկիչ և մարդասպան և աւազակապետ Նիկօ Կասրաձէն։ Մի ժամ տեւող բուռն հրացանաձգութիւնից յետոյ սպանվեցին՝ Կասրաձէն, նրան թագցնող Սէրգէյ Սաամիձէն, նմանապէս բանւոր Գէօրգի Հաջիմամուդովը, որը աւազակների ընկերն էր։ Ոստիկանութիւնը բոլորովին կորուստ չունեցաւ»։

✦ Թէլաւից մեզ հեռագրով յայտնում են, որ դեկտ. 21-ին Թէլաւի գաւառի Շաշիանի կոչված անտառում մի խումբ աւազակների և ոստիկանութեան միջև տեղի է ունեցել հրացանաձգութիւն, որը անցել է ապարդիւն։ Աւազակները կարողացել են թաքնվել անտառի թաւուտներում, հրացաններից շարունակաբար կրակելով։

✦ Վրիպակ.—«Մշակի» № 282-ում, լուրերի բաժնում, հաղորդված էր, որ Կովկասի Փոխարքան փոխել է Իօսէֆ Խէդաշվիլիի վճիռը, որով նա ուղարկվում է 2 տարով ուղղիչ բաժանմունք։ Խէդաշվիլիի ազգանունը պիտի կարդալ Իմէդաշվիլի։

ԼՈՒՐԵՐ ԳԱՆՁԱԿԻՑ

✦ Դեկտ. 18-ին ս. Յովհաննէս եկեղեցու ծխ. դպրոցում պիտի կայանար ծխ. երկրորդ ժողով՝ վաւերացնելու հոգաբարձութեան կազմած նախահաշիւը։ Չը նայած կողմնակի դիմումներին և յայտարարութիւններին, խորհրդակցութեանը եկել էին ընդամենը վեց ծխական (ալևոր պապիկներ)։ Անիմաստ համարելով այդպիսի պայմաններում մի որևէ վճիռ կայացնել, ժողովը չը կայացաւ։

✦ Գանձակի հոգևոր կառավարութիւնը որոշել է փոխանակ 6 ր. 50 կ.-ի՝ պահանջել իւրաքանչիւր պսակվողից յօգուտ Էջմիածնի 7 ր. 50 կ.։ Այս նոր կարգադրութիւնը բազմաթիւ չքաւորների (մանաւանդ մանրահասակ զաւակների տէր այրիներ) երևի հնարաւորութիւնից կը զրկէ վճարել այդ համեմատաբար զգալի գումարը (աւելացրած դրան պսակող քահանայի վարձը, յօգուտ եկեղեցու մի քանի րուբլին և այլն)։ Եւ դրա հետևանքը երևի այն կը լինի, որ չքաւոր դասակարգի անդամները ստիպված կը լինեն հրաժարվել պսակվելու «խելառ» մտադրութիւնից և դրա փոխարէն պահել իրանց տներում առանց պսակի կանանց։ Աւելի լաւ է որոշել մի ընդհանուր նորմա համաձայն պսակվողների նիւթական պայմանների. չէ որ անմիտ բան է՝ պահանջել թէ հարուստից և թէ աղքատից միատեսակ վճար։

✦ Ամսիս 16-ի երեկոյեան գիմնազիայի գերմաներէնի ուսուցիչը ենթարկվել է կոպիտ ծեծի (ըստ երևոյթին գիմնազիստների կողմից)։ Այժմ նա հիւանդ պառկած է։

✦ Թարգմանչաց վանքի մինչև օրս խընամքով պահված մատենադարանը, որ վանքի միակ հարստութիւնն էր կազմում, տեղիս փոխանորդ Լևոն վ.-ի կարգադրութեամբ փոխադրվեց Գանձակ։ Հայր-սուրբը կարգադրել է բերված գրքերի մի մասը բաժանել ս. Յովհաննէս և ս. Լուսաւորիչ եկեղեցիների ծխ. դպրոցներին—մոռանալով Կորինապատի խղճուկ դպրոցը—իսկ թանգարժէք ու հազւագիւտ գրքերը կարգադրել է ուղարկել Էջմիածին։ Կարծում ենք՝ աւելի նպատակայարմար գործ կատարված կը լինէր, եթէ Գանձակի ծխ. դպրոցներին բաժանված գրքերը ծառայէին որպէս նիւթ՝ Խաչակապում գրադարան բաց անելու գործում։ Քաղաքը միշտ կարող է ունենալ իր կողմնակի օգնողը։ Իսկ գիւղը.... *

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Արքունական Թատրոնում

Վերջացան երգչուհի Ե. Թարխանովայի (լիրիկօ-կոլօրատուր սօպրանօ) գաստրօլները Արքունական Թատրոնում։

Օրիօրդին մենք լսեցինք «Րիգօլէտտօ», «Ֆաուստ» և «Տրավիատա» օպէրաներում։ Նրա ձայնի գնահատութիւնը՝ հէնց առաջին գաստրօլից անմիջապէս յետոյ՝ արվեց «Մշակում» (№ 268)։ Այս միայն կարող ենք ասել, որ օրիօրդը թէ իր երգով և թէ խաղով դեկտեմբերի 21-ին, իր բենեֆիսին դրված «Տրավիատա» օպէրայում (Վիօլէտտայի դերում), աւելի լաւ տպաւորութիւն թողեց, քան «Րիգօլէտտօ» և «Ֆաուստ» օպէրաներում։ Միակ պակասութիւնը, որ աչքի էր ընկնում դեկտեմբերի 21-ի երեկոյեան, այն էր, որ երգչուհին վերջին տեսարանում հանդէս էր եկել ոչ-համապատասխան գրիմով, այնպէս որ՝ երբէք թոքախտից հիւծված կնոջ տպաւորութիւն չէր թողնում. մանաւանդ բացակայում էր հազը, որ անհրաժեշտ էր այդ տեսարանում։

Օրիորդ Ե. Թարխանովա այդ երեկոյեան ստացաւ բազմաթիւ թանգարժէք ընծաներ և 8 հատ գեղեցկաշէն կողով՝ ծաղիկներով լի։

Թատրոնը ծայրից ծայր լի էր հասարակութեամբ, որը երկար ու բուռն ծափահարութիւններով վարձատրեց բենեֆիցիանտուհուն։ X.

ՄԱՄՈՒԼ

Ինչպէս գիտեն մեր ընթերցողները, դեկտեմբերի 13-ին Հայոց Դրամատիքական Ընկերութեան դերասանական խումբը ներկայացրեց ոմն «Վասակաւորի» մի նոր պիէսը «Պատրանք» վերնագրով, որ հանդիպեց խիստ քննադատութեան տեղական մամուլի կողմից, բացի մի թերթից, «Մամուլ» կոչված, որին, երևի, շատ դիւր է եկել պասկվիլային բնաւորութիւն ունեցող այդ պիէսը։

Շատ ցաւալի է, որ Դրամատիքական Ընկերութեան վարչութիւնը չէ կարողացել կանգնել իր կոչման բարձրութեան վրա և թոյլ է տուել դերասաններ Սևումեանին և Աւետեանին՝ ստորացնել թատրոնի, բեմի գաղափարը, և գեղարուեստի տաճարը վերածել բալագանի, հանդէս բերելով, դըրդված՝ ստոր թայֆայական ձգտումներից, մի պիէս, որ ոչ միայն զուրկ է որևէ ինքնուրոյնութիւնից, որ հետևանք է բանագողութեան, այլ որ և պասկվիլային բնաւորութիւն է կրում։ Պէտք է բարձր պահել թատրոնի, բեմի գաղափարը, մանաւանդ մեր հայոց պէս ազէտ, անզարգացած ժողովրդի մէջ, ուր թատրոնը կրթիչ և քաղաքական մեծ դեր ունի խաղալու. չը պէտք է զզվեցնել հասարակութիւնը, որ առանց այն էլ շատ չէ յաճախում մայրենի թատրոնը. չը պէտք է առիթ տալ հայ հասարակութեան՝ խորշել հայ թատրոնից և ասել, թէ «ինչի՛ համար գնամ հայ թատրոն, որպէս զի հանդիսատես լինեմ պասկվիլի, որպէս զի տեսնեմ, թէ դերասան Աւետեանը կամ մի ուրիշ դերասան ինչպէս ցեխոտում, աղտոտում են թատրոնի, բեմի վեհ գաղափարը, իրանց անձնական, գձուծ և ստոր ձգտումներին զոհ բերելով այդ վեհ գաղափարը»։

Ահա որտեղ է երեւում անհրաժեշտութիւնը՝ ունենալու բարձր կրթութեան, զարգացման տէր և բարոյակիրթ դերասաններ, որակեալ և բարեկիրթ, և բարձր կրթութեան տէր դերասանը ամենից առաջ կը յարգէր իրան և, յարգելով, թոյլ չէր տայ՝ բեմը ծառայեցնել աղտոտ նպատակների։ Եւ մեր դժբաղդութիւնը հէնց կայանում է նրանում, որ չունենք բարձր կրթութեան տէր և զարգացած դերասաններ, ինչպէս հանգուցեալ Պետրոսեանն էր, կամ շատ քիչ ունենք Ց. Աբէլեանի պէս բարեկիրթ դերասաններ, որոնք երբէք իրանց թոյլ չեն տայ վիրաւորել էսթետիքական ճաշակը, թոյլ չեն տայ ստորացնել բեմի նշանակութիւնը։

Այս տողերն առիթ տուեց մեզ գրելու «Т. Л.» թերթի մէջ լոյս տեսած տ. Բահաթուրի մի մեծ յօդուածը «Պատրանք» պասկվիլային պիէսի մասին։

«Не расцвѣлъ, а отцвѣлъ въ утрѣ пасмурныхъ дней»—այսպէս է սկսում յարգելի քննադատը իր յօդուածը և ցոյց է տալիս, որ Վաստակեանի նոր պիէսան մի մեռելածին մանուկ է և պլագիատ։

«Տխրալի է լինում մեռելածին մանկան լոյս աշխարհ գալը։ Որքան խաբված ակընկալութիւններ։ Որքան զուր տեղ սպառված եռանդ։ Ամենադաժան տանջանքների մէջ մայրը ծնում է երեխային։ Շրջապատողները խորին յոյսով սպասում են կեանքի նոր ստեղծագործողին, սպասում են նոր խօսք, իսկ երեխան դեռ մօր արգանդում—չունենալով կենսունակութիւն—աւարտել է իր գոյութիւնը։

«Այդպիսի մեռելածին հանդիսանում են և այն գրական արտադրութիւնները, որոնք կրում են միայն նմանողական բնաւորութիւն և չեն հանդիսանում գոնէ վառ տաղանդի մի ակնթարթային բռնկումն»։

Ապա քննադատը շատ իրաւացի կերպով նկատում է, որ յաճախ միևնոյն հիմնական միտքը ծառայում է իբրև անվերջ թէմա բոլոր դարերի, բոլոր ազգերի համար, բայց արտադրութեան արժէքը ամբողջովին կախված է այն ձևից, որի մէջ բիւրեղանում է ստեղծագործութիւնը։ «Որքան աւելի շատ պայծառ է, անհատական է տաղանդը, նա աւելի քիչ հնազանդում է շաբլօնին, սովորական նօրմաններին, նա նոյնքան աւելի գերում է մտքերը, զգացումները։ Որքան աւելի խոր է թափանցում, իբրև հզօր ծառ, իր հզօր արմատներով մայրենի հողի մէջ և այդտեղ քաղում է ոյժ, այնքան աւելի փառաւոր է լինում նրա ծաղկումը։ Սակայն էկզոտիքական ծաղիկը երբ փոխադրվում է օտար հողի վրա, նա շատ շուտով է ոչնչանում։ Շրջապատ մթնոլորտի մէջ նա չէ գտնում այն պայմանները, որոնք կարող են պահպանել նրա գոյութիւնը»։

Ցոյց տալով, որ «Պատրանք» պիէսան այդպիսի մի էկզոտիքական ծաղիկ է, քննադատը ասում է, որ նա յիշեցնում է Հաուպտմանի «Միայնակներ» պիէսան, իսկ հիմնական թէման ուղղակի թխուածք է Բլասկօ Իբանիէսի «Մեռեալները հրամայում են» պատմուածքից։ Բայց մինչ տաղանդաւոր սպանացի գրողը կարողացել է տաղանդաւոր կերպով մարմնացնել իդէան, «Պատրանք» պիէսան, իբրև յայտնի յափշտակութիւն օտարի ստեղծագործութեան արդիւնքի, հանդիսանում է սակաւարժէք լումա հայկական գրականութեան մէջ և նրա գրողի պսակի մէջ՝ բացասական մեծութիւն։

«Բեմական էֆեկտների խաբից ընկնելը վնասում է գեղարուեստականութեան։ Աւելորդ պարագաների կուտակումը, որոնք ոչ մի ընդհանուր կապ չունեն հիմնական թեմայի հետ, անհաճոյ կերպով յոգնեցնում է հանդիսականին։ Մամուլի ներկայացուցիչների մէկի երեան գալը, այն էլ հայկական մի ժողովրդական լրագրի խմբագրի դերով, և նրա հասցէին շանթեր տեղալը, մտցնում է պիէսի մէջ պասկվիլային բնաւորութիւն և հեղինակի անկարողութիւնը՝ իր համար նոր սիմվօլիզմի շրջանում ստեղծել նոյն իսկ ամենափոքր իլլիւզիա (պատրանք)։

«Եթէ գեղարուեստական զգացման բացակայութիւնը չը թոյլատրեց հեղինակին խուսափել այդպիսի տգեղ յարձակումից, չէ կարելի չը մեղադրել թատրոնի վարչութեանը, որ նա չէ պաշտպանում գեղարուեստի տաճարը և վերածում է բեմը անձնական հաշիւների կրկէսի։

«Վերածնվող երիտասարդ թատրոնի վարչութիւնը պարտաւոր է վերին աստիճանի զգայուն լինել դէպի այդ հարցերը։ Նա պարտաւոր է թանգ գնահատել ամեն մի մտնողի ուշադրութիւնը և ոչնչով չը վիրաւորել նրա զգացումները։ Նա պարտաւոր է բարձր մնալ բոլոր կաստային և կուսակցական շահերից և, զարգացնելով հանդիսականի մէջ էսթետիքական զգացումն, յոյս դնել ապագայի աջողութեան վրա։

«Եթէ թատրոնը կենսունակութիւն ունի, նամանաւանդ նա պարտաւոր է զգայուն լինել և ունենալ մի հատիկ կուռք՝ գեղարուեստը, մինը այն հզօր լծակներից, որ բարձրացնում են ազգերը և «մի պսակ հրեղէն օձերից»—իմաստութեան այդ նշանաբանը—և ոչ թէ վերածել «հասարակ իժերի պսակի»։

Բայց հասկանալի կը լինեն սոսկ արհեստաւորներ Սեւումեանի և Աւետեանի համար այս տարրական ճշմարտութիւնները, որ չեն կարողացել հասկանալ նոյնիսկ վարչութեան անդամները։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

ԿՈՉ

Վիէննա, 21 դեկտ. (ն. տ.)

Վիէննայի համալսարանին կից հիմնվել է մի գեղարուեստա-պատմական ինստիտուտ, այս կոչը ստորագրողի վարչութեան տակ։ Մի բաժին նուիրված է հայկական գեղարուեստի ուսումնասիրութեանը և դասվում է նման բաժինների մի ամբողջ շարքի մէջ, Յունաստանի, Սիրիայի, Միջագետքի, Փոքր-Ասիայի և Ռուսաստանի գեղարուեստների համար։

Ուսումնասիրութեան հումնիւթի կարիքը այս բաժիններից ամեն մէկի համար այնքան մեծ է, որ չէ կարող ծածկվել ինստիտուտի՝ առայժմ շատ համեստ միջոցներով։ Այդ պատճառով ներկայ կոչը ստորագրողը դիմում է հայ հասարակութեանը, յուսալով որ նա, իր կարողութեան չափ, նեցուկ կը հանդիսանայ այս կոչը ստորագրողի ձգտումին, տալ հայկական հին գեղարուեստին այն առաջնորդական դերը, որը նրան պատշաճ է, միջին դարերի գեղարուեստի, զարգացման մէջ թէ Արևելքում և թէ մանաւանդ Արևմուտքում։ Այդ նպատակին հասնելու համար ամենից առաջ պէտք է.

1) Հայկական ճարտարապետութեան, պլաստիկի և նկարչութեան պահպանված յիշատակարանները լաւ լուսանկարներով, կարելոյն չափ լիակատար կերպով ի մի ժողովել և այդպիսով այդ նիւթի ուսումնասիրութիւնը հնարաւոր դարձնել հէնց Վիէննայի մէջ։

2) Այս յիշատակարանների վերաբերեալ հայ գրականութիւնը, ամբողջական կամ քաղուածօրէն թարգմանութիւնների միջոցով, եւրօպական գեղարուեստագիտութեանը մատչելի դարձնել։ Ամենից առաջ մենք մտածում ենք ճարտարապետ Թորամանեանի աշխատութիւնների հրատարակութեան մասին։

3) Միջոցներ ժողովել, որ ընդունակ երիտասարդ հայ կամ եւրօպական գիտնականներ կարողանան իրանց նուիրել հայկական գեղարուեստի մասնաւոր ուսումնասիրութեանը, կատարել անհրաժեշտ ճանապարհորդութիւններ և հրատարակել նկարներով հանդերձ իրանց աշխատութիւնների արդիւնքները։

Ներկայ կոչը ստորագրողը յոյս ունի, որ այն ջերմ մասնակցութիւնը, որ ցոյց է տալիս ինստիտուտի աշխատութիւններին Վիէննայի մեծարգոյ Մխիթարեան միաբանութիւնը, որը մանաւանդ բանասիրական-պատմական հողի վրա նեցուկ է ինստիտուտին, աւելի վստահութիւն կը ներշնչէ դէպի այս վերջինը։

Վիէննայի համալսարանի գեղարուեստա-պատմական ինստիտուտը շնորհակալ կը լինի ամեն մի նպաստի և աջակցութեան համար և պաշտօնապէս կը վաւերացնի ստանալիքը։

Prof. Dr. Josef Strzygowskï
K. K. Hofrat.
Vorstand des Kunsthist. Instituts.
Ինստիտուտի հասցէն.—Wien (Австрія, Вѣна), I, Franzensring 22, Kunsthistrisches Institut.

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- Թաւրիզում հանգիստ է։
- Սալար-ուդ-Դօվլէն սպառնում է քարուքանդ անել Թէհրանի անգլիական բանկը, եթէ չը վերադարձվի իրան այն 80,000 թումանը, որ գրաւել էր Մօրգան-Շուստէրը։
- Բուշիր հասան 300 բրիտանական նաւաստի գնդակացիրներով։
- Գրէյի քաղաքականութիւնը յարձակումների ենթակայ է Լօնդօնում։ Ասում են, որ Գրէյը համաձայնել է Ռուսաստանի հետ բաժանելու Պարսկաստանը։
- Շուստէրին փոխարինելու են պարսիկ պաշտօնեայով։
- Էկս շահի կողմնակիցները յաղթութիւն տարան կառավարական զօրքերի վրա։
- Ադանայի վալին հաղորդում է Կ. Պոլիս, թէ հայերը մեծ խմբերով գաղթում են Կիպրոս կղզին կոտորածի երկիւղից։ Մէրսինայում ժողովվել են 15,000 հայեր, որոնք սպասում են նաւ նստելու։
- Երիտասարդ-թիւրքերը որոշել են ժամանակաւորապէս զիջումներ անել մակեդօնացիներին և ալբանացիներին։ Երիտասարդ-թիւրքերի գաղտնի նպատակն է արմատախիլ անել իրանց բոլոր քրիստոնեայ թշնամիներին և միութիւն հաստատել Թիւրքիայի և Պարսկաստանի միջև։
- Չինական կառավարութիւնը վճռել է ամենախիստ միջոցներով ճնշել ապստամբութիւնը Մօնգօլիայում։
- Ռուսաստանը չինական կառավարութեանը ուլտիմատում ներկայացրեց պահանջելով ոչնչացնել չինական գերիշխանութիւնը Մօնգօլիայում։
- Ֆրանսիական լրագիրները հաղորդում են, որ Ռուսաստանը և Եապօնիան գաղտնի պայմանագիր են կապել Հեռաւոր Արևելքի վերաբերութեամբ։ Ընդհանուրի կարծիքով՝ այդ քայլը ուղղված է Աւստրիայի դէմ։
- Ալպեան լեռներում ձիւնակոյտների փլուածքների տակ ոչնչացան մի քանի գիւղեր. կան մարդկային զոհեր։
- Գերմանական քաղաքական շրջաններում չափազանց դժգոհ են կոմս Էրէնտալի քաղաքականութիւնից, որ գցում է եռապետեան դաշնակցութեան պրեստիժը, զրգռիչ դիրք է բռնում Գերմանիայի վերաբերութեամբ։
- Հաղորդում են, որ ոստիկանութեան դեպարտամենտի վերատեսուչ նշանակվելու է պետական դատաստանական պալատի դատախազ Կորսաչը։
- Օդեսայի քաղաքային հիւանդանոցի մի խումբ բժիշկներ հրաժարվեցին մաքառել բծաւոր տիֆ հիւանդութեան դէմ։
- Ռօստով Դ./Վ. քաղաքային դուման, որ մրցում է հարևան Նօվօչերկասկի հետ, ապագայ համալսարանի համար յատկացրեց 2 միլիօն ռուբլի։
- Թիֆլիսից հեռագրում են «Р. С.»-ին, որ Րօդիչեվին արգելվեց դասախօսութիւն կարդալ առաջին անգամ հայրենասիրական ընկերութեան անդամների խնդրանօք։
- Իլիօդիօր աբեղային թոյլատրվեց հրատարակել «Громъ и Молнія» թերթը։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾ.
21 դեկտեմբերի

ԲՈՒԷՆՈՍ-ԱՅՐԷՍ։ Սպասվում է երկաթուղային բանւորների գործադուլ։

ԲՐԻՒՍԷԼ։ Մօնս նահանգի քարածխային հանքերում գործադուլ արին 25,000 բանւոր։ Կարծում են, որ վաղվանից կը սկսվի ընդհանուր գործադուլ։ Կարգ ու կանոնը չէ խախտվել։

1678 ձայնի դիմաց մեծամասնութեամբ որոշվեց գործադուլ յայտարարել Բօրինաժի շրջանում։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Պետական Խորհուրդը մերժեց լրացուցիչ կերպով երեք միլիօն ռուբլի յատկացնել դպրոցական շինարարական պէտքերի համար։

Երաժշտական-պատմական ընկերութիւնը տօնեց երաժշտագէտ Բալակիրէվի ծննդեան 75-ամեակը ցուցանակ կպցնելով այն տան ճակատին, ուր ապրում էր և մեռաւ հանգուցեալը։

Սենատը անհետևանք թողեց «Рус. Вѣд.»-ի խմբագիր Սօբօլևսկիի վճռաբեկ բողոքագիրը, որ դատապարտված է մի օրվայ բանտարկութեան՝ առանց պալատական ցենզուրայի Կայսրի հեռագիրը առ կոմսուհի Ուվարօվան տպելու համար։

Բացվեց մենդէլէեվեան երկրորդ համագումարը. նախագահ ընտրվեց պրօֆէսօր Ումօվը։

ԲԵՐԼԻՆ։ Գերմանական-ռուսական փոխադարձ առևտրական յարաբերութիւնների դաշնակցութեան խորհրդի պատգամաւորութիւնը այցելելու է փետրվարին Պետերբուրգ, Մօսկվա և այլ ռուսական քաղաքներ՝ աւելի սերտ կապեր ստեղծելու նպատակով։

ՍԵՎԱՍՏՕՊՕԼ։ Զինուորա-ծովային դատարանը «Кубанецъ» նաւի նաւաստի Կուզնեցովին դատապարտեց հրացանազարկութեան ապստամբութիւն քարոզելու համար։

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ձմեռային երթևեկութիւն)
(Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ՝ **արագ** № 2 **գնացքը**՝ (I, II և III կարգի վագօն.) 10 ժ. 20 ր. առաւ., Աղստաֆա է հասնում 12 ժ. 44 ր. կէսօր., Գանձակ՝ 3 ժ. 18 ր. ցեր., Եւլախ՝ 4 ժ. 52 ր. ցեր., Հաջի-Կաբուլ՝ 8 ժ. 35 ր. երեկ., Բագու՝ 11 ժ. 43 ր. գիշ.։ **Մարդատար** № 6 **գնացքը**՝ (միայն I և II կարգի վագօն.) 3 ժ. 33 ր. ցեր., Աղստաֆա է հասնում 6 ժ. 29 ր. երեկ., Գանձակ՝ 9 ժ. 46 ր. երեկ., Եւլախ՝ 11 ժ. 53 ր. գիշ.՝ Հաջի-Կաբուլ՝ 4 ժ. 20 ր. գիշ., Բագու՝ 8 ժ. 11 ր. առաւ.։ **Պօստատար** № 4 **գնացքը**՝ (բոլոր կարգերի վագօններով) 11 ժ. 18 ր. գիշ., Աղստաֆա է հասնում՝ 2 ժ. 12 ր. ցեր., Գանձակ՝ 5 ժ. 29 ր. առաւ., Եւլախ, 7 ժ. 30 ր. առաւ., Հաջի-Կաբուլ՝ 12 ժ. 01 րօպէին կէսօրվայ, Բագու՝ 4 ժամ 52 րօպէին ցերեկվայ։ **Խառն** № 106 **գնացք**՝ (IV կամ III կարգի վագօններով, երբ կարևորութիւն պատահի) 6 ժ. 32 ր. առաւ., Աղստաֆա է հասնում 10 ժ. 42 ր. առաւ., Գանձակ՝ 2 ժ. 57 ր. ցեր., Եւլախ՝ 6 ժ. 25 ր. երեկ., Հաջի-Կաբուլ՝ 1 ժ. 16 գիշ., Բագու՝ 7 ժ. 12 ր. առաւ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ՝ **Մարդատար** № $^{74}/_{75}$ **գնացք.**՝ (բոլոր կարգի վագօններով) 11 ժ. 48 ր. գիշ., Ղարաքիլիսա է հասնում 7 ժ. 01 ր. առաւ., Ալէքսանդրօպօլ՝ 10 ժ. 31 ր. առաւ., Էջմիածին կայար.՝ 3 ժ. 45 ր. ցեր., Ուլուխանլու՝ 4 ժ. 12 ր. ցեր.։ (Առանց Երևան մտնելու։ Սակայն Ուլուխանլուից առանձին գնացքը Երևան ուղևորվում է 4 ժ. 37 ր. ցեր., և Երևան հասնում 5 ժ. 20 ր. երեկոյեան)։ Նախիջևան՝ 9 ժ. 26 ր. երեկ., Ջուլֆա՝ 11 ժ. 10 ր. երեկ.։ **Մարդատար-ապրանքատար** № $^{78}/_{79}$ գնացքը. 5 ժ. 34 ր. երեկ., Ղարաքիլիսա է հասնում՝ 12 ժ. 48 ր. գիշ., Ալէքսանդրօպօլ՝ 4 ժ. 32 ր. գիշ., Էջմիածին կայարան՝ 4 ժ. 41 առաւ., Երևան՝ 11 ժ. 06 ր. առաւ., և այլևս դէնը չէ գնում։

ԲԱԹՈՒՄ՝ **Մարդատար** № 5 **գնացքը**՝ (բոլոր կարգի վագօններով) 5 ժ. 45 ր. երեկ., Միխայլօվօ է հասնում 9 ժ. 51 ր. եր., Բաթում՝ 6 ժ. 26 ր. առաւ., **Պօստատար** № 3 **գնացքը**՝ (բոլոր կարգի վագօններով 9 ժ. 50 ր. առաւ., Միխայլօվօ է հասնում 1 ժ. 56 ր. կէսօր., Բաթում՝ 11 ժ. 13 ր. գիշ.։ **Մարդատար** № 7 **գնացքը**՝ (II և III կարգի վագօններով) 10 ժ. 38 ր. գիշ., Միխայլօվօ է հասնում 3 ժ. 08 ր. գիշ., Բաթում՝ 1 ժ. 42 ր. կէսօրին։

ԲՈՐԺՈՄ՝ **մարդատար** № $^{9}/_{66}$ **գնացքը**՝ (բոլոր կարգի վագօն.) 3 ժ. 23 ր. ցեր., Գօրի է հասնում 6 ժ. 02 ր. երեկ., Բօրժօմ՝ 9 ժ. 02 ր. գիշ.։

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՍՆՈՒՄ

ԲԱԳՈՒԻՑ՝ **Մարդատար** № 5 **գնացքը**՝ 5 ժ. 07 ր. երեկ.։ **Պօստատար** № 3 **գնացքը**՝ 8 ժ. 54 ր. առ.։ **Արագ** № 1 **գնացքը**՝ 9 ժ. 56 ր. գիշ., որը այլևս դէնը չէ գնում։ **Խառն** № 107 **գնացքը**՝ 9 ժ. եր.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ՝ **պօստատար** № $^{72}/_{73}$ **գնացքը**՝ 8 ժ. 25 ր. առաւ.։ **Մարդատար-ապրանքատար**՝ № $^{80}/_{81}$ **գնացքը**՝ 1 ժ. 40 ր. ցերեկվայ։

ԲԱԹՈՒՄԻՑ՝ **Մարդատար** № 6 **գնացքը**՝ 2 ժ. 50 ր. ցերեկ., **Պօստատար** № 4 **գնացքը**՝ 10 ժ. 28 ր. գիշ.։ **Մարդատար** № 8 **գնացքը** 5 ժ. 33 ր. առաւ. (այս գնացքը Բագու չէ գնում)։

ԲՈՐԺՈՄԻՑ՝ **Մարդատար** № $_{6/10}$ **գնացքը**՝ 7 ժ. 58 ր. առաւօտեան։

Ծանօթութիւն.—Ձմեռային երթևեկութեան միջոցին որոշված է Թիֆլիսից Պետերբուրգ (յետ և առաջ) անմիջական, առանց վագօն փոխելու հաղորդակցութիւն՝ Բագուի-Ռօստովի-Խարկովի վրայով Անդրկովկասեան գծի արագ №№ 1 և 2 գնացքներով։ Գնացքում լինելու է մէկ միքստ վագօն I և II կարգի և մէկ վագօն III կարգի. բոլոր տեղերը պլացկարտներով են։

Նոյնպէս հաստատվում է Թիֆլիս-Մօսկվա յետ և առաջ, առանց վագօն փոխելու, հաղորդակցութիւն՝ Բագուի-Ռօստովի և Կօզլովի վրայով՝ արագ № 1 և 2 գնացքներով։ Գնացքում լինելու է Միջազգային ընկ. մէկ միքստ վագօն I և II կարգի, որի համար վերցվելու է յաւելեալ արժէք. ամեն մէկ հազար վերստին 8 ր. I կարգում և 6 ր. II կարգում։ Թիֆլիսից-Մօսկվա հաշվում է 2877 վերստ։

Առանց վագօն փոխելու հաղորդակցութիւնը Թիֆլիս-Բագու-Ռօստով յետ և առաջ կատարվելու է արագ № 1 և 2 գնացքներով։ Բոլոր կարգերի տեղերը պլացկարտով են։



ՃԱՐՊԱՅԻՆ ՑՊԱՐԸ
իդէալական միջոց է կաշին ամենագեղեցիկ գոյնի հասցնելու համար։
Անփոխարինելի է որպէս պարահանդէսի, սալօնի և առհասարակ ամենօրեայ շպար։ Ամուր կպչում է կաշուն և միանգամայն անվնաս է։ Արկղիկը 30 կոպ.։ Գնելուց՝ ուշադր. դարձնել, որպէս զի տրվի ձեզ իսկական „№ 4711 ցպարը“։ № 4711 օրէնքով հաստատված է։
Ֆերդ. Միւլհենս. պարֆիւմէրիա № 4711.
ԿԷՕԼՆ Ռ./վ. և ՌԻԳԱ։ Մատ. Ն. Մ. Ռուսաց Պալատի։
(M. 341516/341546) 1—1

ԲԺԻՇԿ
Ե. Ի. ՄԻՆԱՍԵԱՆՑ
Ներքին, երեխայոց և ստամոքսա-աղիքային հիւանդութիւններ։
Պրօֆ. Mathien-ի մասնագիտական կլինիկայից—Պարիզում։
Ընդունելութիւնը (առաւ. ժ. 9—11.
(երեկ. ժ. 5—7.
Ելիզավետինսկայա փող. № 39. տել. № 1067.
(Կ. Հ. Ու.) 669. 100—91

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մեղուաբուծ. Կովկասեան Ընկերութիւնը դեկտ. 20-ից բացում է ԲԱԶԱՐ վաճառելու համար ԻՍԿԱԿԱՆ ՄԵՂՐ՝ Կովկասեան Գիւղատնտ. Ընկերութեան շէնութեան մէջ, Բարեատինսկայա փ., Ալէքսանդրեան այգի
(Ու.Կ.) 1172. 5—3

ХИМИЧЕСКАЯ ЛАБОРАТОРІЯ
С.-ПЕТЕРБУРГСКАЯ
ЗАЯВЛЕНО ДЕПАРТАМЕНТУ ТОРГОВЛИ И МАНУФАКТУРЪ

Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՔԻՄԻԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ
(Հիմնված է 1860 թ.)
ՈՍԿԷ ՄԵԴԱԼ, ՊԱՐԻԶ 1900 Թ.
ՍԱՊՕՆ ԾԱՂ-ԿՈՂ „ՄԱՆՈՒՇԱԿ“
Ծաղկող «Մանուշակ» գլիցէրինեան սապօնը առաջացնում է թարմ մանուշակի իսկական հոտ, թարմացնող մեծաքանակ փրփուր և տալիս է կաշուին փափկութիւն և քնքշութիւն։
Գլխաւոր պահեստը. Кавказское Т-во Торговли Аптекарскими Товарами — Тифлисъ, Баку, Батумъ.
523. 8—8

ԲԺԻՇԿ
Յ. ՄԵԼԻՔ-ՆՈՒԲԱՐԵԱՆ
(ՏԷՐ-ՄՈՎՍԻՍԵԱՆ)
Ներքին և երեխայոց հիւանդութիւններ
(Մասնագիտ. ԹՈՔԵՐԻ հիւանդութիւններ)
Ընդունե- (առաւօտեան ժ. 12—1-ը։
լութիւնը (երեկոյեան ժ. 4—6-ը։
Բէբուտովսկայա, № 66.
(Ա.Օ.) 1035. 100—45

1883 Երեսնամեակ Աղբիւրի 1912
Բացված է 1912 թ. բաժանորդագրութիւնը
XXX ՏԱՐԻ ԱՂԲԻՒՐ ԵՒ ՏԱՐԱԶ XXIII ՏԱՐԻ
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍՆԵՐԻ
Հրատարակվում են ճոխ, բազմաբովանդակ, մասնակցութեամբ մեր և եւրօպական յայտնի գրականագէտների, մանկավարժների և արուեստագէտների։
ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԸ ՍՏԱՆՈՒՄ ԵՆ.
I ԱՂԲԻՒՐ պատկերազարդ ամսագիրը «ՄԱՆԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ» յաւելուածով։
II ՏԱՐԱԶ պատկերազարդ հանդէսը «ԹԱՏՐՕՆ և ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ» յաւելուածով։
III ԱՌՈՂՋԱՊԱՀ ամսաթերթը։
IV ԱՂԲԻՒՐԻ ԱԿՈՒՆՔԸ V և VI պրակներ։
V ՕՐԱՑՈՅՑ-ԱԼՄԱՆԱԽ 1912 Թ.։
VI ԿՈՆԴԱԿԻ ԸՆԹԵՐՑՈՒՄԸ ԳԻՒՂՈՒՄ, բազմագոյն հրաշագեղ պատկեր, պատրաստված Եւրօպայում։
VII Հայոց ապագայ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ մեծադիր պատկերը։
VIII MONA LISA (Ջիակօնդա) Լուվրի մուզէից գողացված տիեզերահռչակ հիասքանչ նկարչի իսկական պատճէնը, հոյակապ զարդ ամենափարթամ դահլիճի։
IX Մեծն Նապոլէօն I և հայոց Լևոն վերջին թագաւոր։
X Նապոլէօն Բօնապարտի մանկութիւնը պատկերներով։
XI ԵՐԵՍՆԱՄԵԱՅ ԱՂԲԻՒՐԸ, souvenir.
Այս բոլորի տարեկան բաժանորդագինը 10 ր., արտասահմ. 18 ր. կամ 50 ֆր.
Դպրոցական աշակերտների համար
ԱՂԲԻՒՐԸ տարեկան 2 ր.։
ԱՂԲԻՒՐ և ԱՌՈՂՋԱՊԱՀ տարեկան 3 ր.։
ԱՂԲԻՒՐ, ԱՌՈՂՋԱՊԱՀ և ՏԱՐԱԶ առանց յաւելուածների, պրէմիաների և Թատրօն Երաժշտութեան՝ տարեկան 4 ր.։
Աղբիւր, Առողջապահ, Տարազ բոլոր յաւելուածներով և պրէմիաներով 5 ր. (արտասահման 10 ր.)։
ԱՊԱՌԻԿ ԵՒ ՄԱՍ-ՄԱՍ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ
Հասցէն՝ Тифлис, Редакція „АБГЮР“ կամ „ТАРАЗ“.
Tiflis (Caucase) Direction Agbür կամ Taraz.
(Ու.Կ.Ե.) 30. 5—1 Խմբագիր-հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ

ОБЪЯВЛЕНIЕ
Симъ объявляемъ, что въ скоромъ времени въ гор. Баку открывается контора объявленій съ обезпеченнымъ залогомъ подъ фирмою
первая на Кавказѣ Международная контора Объявленій
„КАВКАЗЪ“
Контора объявленій будетъ производить пріемъ объявленій и подписки во всѣ мѣстныя, иногороднія и заграничныя газеты и журналы.
Пріемъ объявленій НА ВОСТОЧНЫХЪ ЯЗЫКАХЪ. Пріемъ подписки
А также будетъ издавать широкораспространенныя рекламы на всѣхъ языкахъ, какъ то: плакаты, брошюры, прейскуранты и пр.
Пріемъ переводовъ на русскій, армянскій, грузинскій, татарскій (персидско-адербеджанскій) и на другіе языки, гарантируя точность перевода.
О днѣ открытія и адресъ К-ры будетъ объявлено особо во всѣхъ газетахъ.
Временный адресъ: БАКУ, Николаевская ул. ред. газ. „Ени-Иршадъ“. Тел. 21—12 и 15—02. Почтовый ящикъ № 258.
Съ почтеніемъ Г. Яковлевъ, П. Джалагонія и А. Мурадовъ.
1179. 5—2

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.